ՀՏԴ 891.981-1 Մկրտումյան
ԳՄԴ 84Հ-5
Մ 807

Մկրտումյան Նարինե
Մ 807 Երկեր: Էլեկտրոնային տարբերակ/Ն. Մկրտումյան.-Եր.: Հեղ. հրատ., 2014.- 160 էջ:

Սույն ժողովածուում մեկտեղված են Նարինե Մկրտումյանի չափածո ստեղծագործությունները՝ հելլենական լեգենդները, եզոպոսյան առակներն ու լեգենդները, խոհախրատական քառյակները և ուսուցողական հետաքրքրաշարժ հանելուկները:

Գիրքը կազմված է գրողի նախընտրած սկզբունքով:

ՀՏԴ 891.981-1 Մկրտումյան
ԳՄԴ 84Հ-5

ISBN 978-9939- 0-1148-6

© Մկրտումյան Ն., 2014

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԵՐԵՔԵՐ

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2014

Հեղինակի ստեղծագործական ուղին

Նարինե Սերյոժայի Մկրտումյանը ծնվել է 1975 թ. մարտի 30-ին, ք. Երևանում: 1991 թ. ավարտել է Դ. Դեմիրճյանի անվան թիվ 27 դպրոցը: 1991-1996 թթ. ուսանել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1996-1998 թթ. աշխատել է դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, այնուհետև զբաղվել է լրագրողական գործունեությամբ՝ աշխատակցելով մի շարք թերթերի ու ամսագրերի:

2008 թվականին լույս է տեսել նրա անդրանիկ գիրքը՝ «Որտեղի՞ց ենք գալիս, ովքե՞ր ենք, ո՞ւր ենք գնում» խոհափիլիսոփայական երկը: «Ամեն մի գիտության բանալին հարցական նշանն է»,- ասել է Բալզակը: Գրքի վերնագիրը պատահական չէ ընտրված, քանի որ դեպի աստվածային գիտությունը տանող կատարելության ուղին սկսվում է հենց այս հիմնահարցերի ուսումնասիրությունից, հարցեր, որոնց պատասխանները փնտրելով ու գտնելով՝ մարդն ի վերջո հանգում է հավերժության գաղափարին, հասնում է ինքնաճանաչման և Աստծո ճանաչման, ձեռք է բերում տիեզերական մտածողություն, գերգիտակցական մակարդակ:

Հեղինակը, հիմնվելով աշխարհի հնագույն կրոնների և հեղինակավոր սուրբ գրքերի վրա, արտահայտել է իր իմաստասիրական մտորումները կյանքի ու մահվան, հոգու և մարմնի, հավիտենականի և անցողիկի, մեղքի, ճակատագրի, կամքի ազատության, ինչպես նաև մի շարք այլ հարցերի վերաբերյալ, անդրադարձել է համամարդ-

կային ու համատիեզերական կարևորագույն գաղափարների, որոնք իրենց ընդգրկունությամբ և մշտնջենականությամբ հատում են ժամանակի ու տարածության անծիր օվկիանոսը՝ ներթափանցելով վերերկրային խորախորհուրդ առեղծվածների մեջ:

Սակայն լոկ այսքանը թերևս բավարար չէր տարիների ընթացքում պրպտուն հոգում ամբարված խոհածին խորհրդածություններն ընթերցասերների հետ կիսելու համար: Դրանք վերստին պետք է տային իրենց հասուն պտուղները, այս անգամ արդեն չափածո ստեղծագործությունների՝ քառյակների տեսքով…

2009-2010 թթ. համահեղինակային հրատարակությամբ լույս է տեսել «Բնության դեղատուն» քառահատոր մատենաշարը, որում տեղ են գտել տարբեր ժողովուրդների բժշկարանների կողմից առաջարկվող լավագույն դեղատոմսերը, «Գիտունի՞կ ես, թե՞ անգետիկ» ժամանցային խաղագիրքը միջին տարիքի դպրոցականների համար, «Առակներ և լեգենդներ» գիրքը, որտեղ զետեղված են եզոպոսյան առակների՝ հեղինակի կողմից մշակված ու չափածո դարձված տարբերակները, որոնցում պարսավանքի են ենթարկվել մարդկային արատները՝ հպարտությունը, մեծամտությունը, սնապարծությունը, ագահությունը, երախտամոռությունը, խորամանկությունը, տգիտությունը, կեղծավորությունը, նախանձը…

2012 թվականին ընթերցասերներին են ներկայացվել վերոհիշյալ տպագիր գրքերի էլեկտրոնային 3D ձևաչափերը: Նույն տարում այդ շարքը համալրվել է հետաքրքրաշարժ ուսուցողական հանելուկներով:

Նույն թվականին յոթ բեղմնավոր օրերի ընթացքում, ասես մեկ շնչով, ծնունդ են առել Նարինե Մկրտումյանի

խոհախրատական քառյակները՝ բանաստեղծական արվեստի յուրօրինակ փոքրիկ քերթվածքները: Թեև դրանցում տարբեր թեմաներ են շոշափվում, այնուամենայնիվ բոլորն էլ անտեսանելի ներքին թելերով շաղկապված են, միահյուսված այնպես, ինչպես ծաղկաշղթայի ամեն մի ծաղիկը՝ յուրաքանչյուրն իրեն բնորոշ բույրով ու թույրով: Թվում է՝ ամեն ինչ արդեն ասված է, և Թումանյանի՝ գոհարի պես հղկված խոհակերտ քառյակներից, Արևելքի մեծագույն իմաստուններ Օմար Խայամի, Խաքանիի, Հաֆիզի փայլուն և բովանդակալից ռուբայիներից հետո ուրիշ ոչ ոք չի կարող այլևս ներդրում ունենալ պոեզիայի այս ժանրում: Այնուհանդերձ յուրաքանչյուր գոյ-արարած, ով անցել է խոչընդոտներով ու վայրիվերումներով լի տառապալից ուղի, որոնել ու գտել լինելության իմաստը, ամեն մի երկրավոր, ով վաղանցուկ սին փառքի, դափնիների ու նյութական ձեռքբերումների փոխարեն կարևորում է հարամնա հոգևոր արժեքներն ու գանձերը, հարկավ, իր ուրույն ասելիքը կունենա սույն ասպարեզում:

2013 թ. էլեկտրոնային գրքերի շարքը համալրել է «Հելլենական լեգենդներ» ժողովածուն: Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները՝ համամարդկային մշտնջենական այս գանձերը, որոնք առ այսօր պահպանել են իրենց արդիականությունն ու գեղարվեստական բարձր արժեքը, մշտապես ներշնչանքի աղբյուր են հանդիսացել անվանի գրողների, նկարիչների, քանդակագործների համար, ովքեր ոգեշնչվելով երկնել են բարձրարվեստ ստեղծագործություններ:

Ինչ վերաբերում է սույն ժողովածուին, ապա այստեղ մեկտեղված են անտիկ դիցաբանության լավագույն նմուշներից յոթը՝ կերպարանափոխությունը պատկերող, գե-

դարվեստական մշակման ենթարկված չափածո հատ-ընտիր զրույցներ, որոնց շնորհիվ ընթերցողը մտովին կտեղափոխվի գեղատեսիլ Հելլադա՝ օլիմպոսյան աստ-վածների և քաջարի դյուցազունների հայրենիք, ներկա կլինի հերոսների հաղթանակներին ու պարտություններ-ին, նրանց հետ ակամա կհուզվի ու կտխրի, կոգևորվի ու կհրճվի:

Լեգենդների կերպարներն են դափնեծառ դարձած հավերժահարս Դափնեն, ինքնասիրահարված ու այլա-կերպված Նարցիսը, մահացող և վերստին հարություն առնող Ադոնիսը, եղջերուի կերպարանք առած Ակտեո-նը, սարդ-աղջիկը՝ Արաքնեն, եղեգի վերափոխված Սի-րինգսը, հելիոսորդին՝ անխոհեմ Ֆաետոնը... Իսկ նրանց կողքին մեկ առ մեկ կերպավորվում են վեհանձնական, փառահեղ, հուժկու, բայց միևնույն ժամանակ՝ երկրա-վորին բնորոշ թուլություններով, երբեմն էլ՝ փոթորկա-հույզ զգացմունքներով լի հելլենական դիքերն ու դի-ցուհիները՝ շանթառաք Զևս-Դիոսը, նրա գեղանի դուստ-րը՝ կորովաձիգ որսորդուհի Արտեմիսը, մահկանացու-ների և աստվածների սրտերը սիրո ոսկյա նետերով խո-ցող չարաճճի պատանին՝ ոսկեթևիկ Էրոսը, Դափնեին խենթի պես սիրահարված արծաթաղեղ Ապոլլոնը, կա-ռափնածին դիցուհին՝ ռազմաշունչ ու խոհուն Աթենաս-Պալլասը, սրնգահար այծոտն Պանը՝ մե՛րթ ծիծաղաշարժ, մե՛րթ պանական ահ ու սարսափ ներշնչող, որդեկորույս հուր-Հելիոսը և, իհարկե, միշտ դեռատի, գեղեցկանազ Աֆրոդիտեն՝ ոսկեգիսակ կիպրուհին...

Հարկ է նշել նաև, որ լեգենդներում տեղ են գտել մի շարք հեղինակային նորակազմություններ, որոնք առա-վել գունեղ են դարձրել ստեղծագործությունների լեզվա-ոճական ներկապնակը:

ՀԵԼԼԵՆԱԿԱՆ ԼԵԳԵՆԴՆԵՐ

Դափնե

Թե ինչպես հավերժահարս Դափնեն ծառ դարձավ…

Կա մի լեգենդ հելլենական,
Որ դարերից վաղնջական
Բերանացի հասել է մեզ,
Չի մոռացվել, կորել անտես:
Ասում են, թե օրերում հին
Ապոլլոնը՝ Զևսի որդին,
Լուսաճաճանչ, ոսկեգանգուր,
Բոց-աչքերում ցասում ու հուր,
Վրեժ լուծեց ժանտ Պիթոնից՝
Հրեշավոր, դժխեմ ու պիղծ:
Քաջազունը չարքին հաղթեց.
Բյուր նետերով դիպուկ զարկեց,
Անշնչացած փռեց գետնին
Սարսափազդու նենգ օձի դին:
Հնչեց պեան դյուցազնական՝
Ցնծուն երգը հերոսական,
Ձոնված պիթյան Ապոլլոնին՝
Չարագործին կործանողին:

Դելոսացին՝ լույսի աստված,
Խավարի դեմ հաղթանակած,
Խրոխտապանծ, անհաղթ, անպարտ
Շուրջն էր զննում հպարտ-հպարտ՝
Արծաթաձույլ զենքը ուսին,
Երբ նկատեց ժիր Էրոսին,

Ով աղեղն էր լարում փութկոտ,
Չարաճճի ու ծիծաղկոտ,
Յուր հերթական զոհին գտած,
Հրճվանքով լի բերանը բաց:
-Էհե՜յ, փոքրի՛կ, սիրո՛ աստված,
Ինչո՞ւ ես դու այդպես զինված,
Ինչի՞ դ է պետք զենքը ահեղ՝
Նետ ու կապարճ, ոսկե աղեղ:
Նետաձի՞գ ես դու քեզ կարծում,
Ուժե՞ղ ես արդեն փորձում,
Հե՜յ, նորածի՛լ խակ պատանյակ,
Փա՞ռք ես տենչում, թե՞ մրցանակ:
Չկա ինձ պես աղեղնաձիգ,
Այս Պիթոնին հապա մտիկ,
Որ քիչ առաջ սպանեցի,
Բերանքսիվայր զգետնեցի:
Իսկ Էրոսը գանգրածամիկ,
Որ սուրում էր ինչպես քամին,
Արագոտն ու ոսկեթև,
Սրաթռիչ, սյուքից թեթև,
Մարդկանց բաշխում
Անհագուրդ սեր,
Հապճեպորեն գերում սրտեր՝
Ընծայելով երջանկություն,
Հրայրք-տարփանք,
Հուրք-ջերմություն,
Բիրտ խոսքերից հույժ սրտնեղեց,
Ապոլլոնին ձեռաց նեղեց:
-Կասկած չկա, որ հմուտ ես,
Բայց իմ նետը կխոցի քեզ,
Վիշտ կբերի ու տառապանք,

Ոչ թե՝ սիրո անհուն բերկրանք:
Այսպես ասաց կիթերուհու
Որդին հերոս՝
Լուսաժպիտ անգութ Էրոսն,
Ու թափ տալով շողուն թևերն,
Անմիջապես սլացավ վեր,
Վայրկենապես հասավ Պառնաս՝
Նվիրական ու երկնահաս:
Նա կապարճից զենքը հանեց,
Սիրահարույց ոսկյա նետը
Ախոյանի սիրտը խրեց,
Մեկ այլ նետով՝ սերը մարող,
Զրկանքներ և կսկիծ բերող,
Հեգ Դափնեի սրտին դիպավ՝
Պատճառելով մորմոք ու ցավ:

Ապոլլոնը սիրահարվեց,
Խելքը գլխից լրիվ մաղվեց,
Ցնծությունից ելավ երկինք,
Պատեց նրան սիրառատ կիրք:
Իր ողջ կյանքում չէր տեսել դեռ
Այդքան գերող, վճիտ աչքեր,
Վայելչատես, հեզամարմին,
Ջնաշխարհիկ, նազանի կին,
Մարմարի պես ճերմակիրան,
Արմաղաշուրթ դյութիչ բերան,
Փարթամածամ, գեղագանգուր,
Խեթ հայացքում՝ կրակ ու հուր:
Անծանոթին հենց նկատեց,
Իսկույնևեթ նրան ատեց,
Փախավ Դափնեն լեղապատառ,

Այծյամի պես սուրաց անտառ:
-Կա՛նգ առ, քնքո՛ւշ հուրի-փերի,
Դարձել եմ ես սիրուդ գերին,
Հավերժահա՛րս գեղեցկագույն,
Անխիղճ ես դու, անագորույն:
Մի՛ ցավեցրու սիրտս լցված,
Խոլ պատանու նետով խոցված,
Շանթառաքի զավակն եմ ես,
Կանգնի՛ր մի պահ,
Նայի՛ր ինձ, տե՛ս,
Ապոլլոնն եմ աստվածազուն,
Դափնե՛, կա՛նգ առ,
Ո՞ւր ես վազում:
Ճողոպրում ես եղնիկի պես,
Մի՞թե այդքան զազիր եմ ես,
Որ գարշում ես դու ինձանից,
Որ ատելով ատում ես ինձ:
Կուզե՞ս՝ ոսկյա քնարն առնեմ,
Քեզ գովերգեմ, ներբող երգեմ,
Կուզե՞ս՝ սիրտս հանեմ-տամ քեզ,
Բայց մենակ թե ինձ չմերժես:
Վար կբերեմ երկնից աստղեր,
Կնվիրեմ անմոռաց սեր,
Կպարգևեմ երջանկություն,
Աստվածային երանություն,
Միայն, հոգի՛ս, իմը լինես,
Միայն թե դու կինս լինես…

Դափնեն շտապ, շնչակտուր
Սլանում էր արշավասույր,
Հետևում էր նրան ահեղ

Ապոլլոնը արծաթաղեղ,
Ցանկանում էր ճեպով բռնել,
Սիրատարփիկ գիրկը առնել…
-Հա՛յր իմ Պենևս, օգնի՛ր, փրկի՛ր,
Բացվի՛ր գետին, ինձ կլանի՛ր,
Խլի՛ր ինձնից տեսքս չքնաղ,
Բերում է այն արցունք ու ցավ:

Կույսի խնդիրք-աղաչանքը,
Հոգուց բխած թախանձանքը
Տեղնուտեղը իրագործվեց,
Ողջ մարմինը մեկեն թմրեց,
Վերափոխվեց, կապեց կեղև,
Ճոխ վարսերը դարձան տերև,
Ճյուղ-թևերով երկնակարկառ
Դափնեն դարձավ գեղանի ծառ:
Ապոլլոնը՝ խենթ սիրահար,
Դառնահառաչ ու վշտահար,
Անհուն ցավից հուսահատված,
Անպատասխան կրքից վառված՝
Սիրապապակ փարվեց նրան՝
Նազուկ ծառին բարակիրան:

-Ա՜խ, Դափնե՜, հոգի՛ս,
Դու իմ սրտի տեր,
Ինչո՞ւ թողեցիր
Լքված ու անտեր,
Երես թեքեցիր,
Ինձնից հեռացար,
Սերս մերժելով՝
Դափնեծառ դարձար,

Հիմա ո՞նց ապրեմ,
Ասա՛, առանց քեզ,
Հիմա ի՞նչ անեմ,
Ա՜խ, ի՞նչ անեմ ես…

Առյուծասիրտը,
Որ ժամեր առաջ
Հուժկու Պիքոնին
Հաղթած, սիգապանծ
Քնար էր ածում,
Չվարք թևածում,
Եղավ լիովին
Թևաթափ, անզոր,
Տրտում ու մոլոր,
Անհույս սիրավոր,
Յավից՝ վիրավոր…

-Դեռ լսում եմ տրոփյունը,
Սրտիդ անդուլ բաբախյունը,
Ա՜խ, ողջ ես դու, ապրի՛ր անմեռ
Հուր-հավիտյան, հավերժ, հավետ,
Իմ դիցուհի՛ կանաչավարս,
Տանջված հոգուս անհա՛ս երազ,
Փափագում եմ, որ առհավետ
Լինես ինձ մոտ, լինես ինձ հետ,
Պսակ կրեմ քո ճյուղերից,
Բուրումնալից տերևներից,
Քնարս միշտ զուգես շքեղ
Պերճանքովդ կանաչագեղ,
Չթոռչոմես, մնաս դու հար

Բուրումնավետ, մշտադալար:

Ասում են, թե այդ օրվանից՝
Չարաբաստիկ ու դառնալից,
Արվեստի մեծ հովանավոր,
Վսեմափառ ու լուսավոր
Ապոլլոնը տխուր-տրտում,
Խոր կորստի դարդը սրտում
Դափնիներ է կրում առմիշտ՝
Հոգում թախիծ, կսկիծ ու վիշտ:

30.10.12.-01.11.12.



Նարցիս

Թե ինչպես ինքնահավան Նարցիսը ծաղիկ դարձավ…

Գիտե՞ք արդյոք, որ նարգիզը՝
Սիրունատես, նազանի,
Դարեր առաջ՝ անչափ վաղուց,
Եղել է սեգ պատանի:
Թե ինչու է ծաղիկ դարձել,
Զրկվել մարդու կերպարից,
Դուք կիմանաք՝ ընթերցելով
Ասք-լեգենդը թախծալից:

Պատմում են, որ Հունաստանում
Հին դիքերի ժամանակ
Ապրում էր մի գոռոզամիտ,
Ինքնահավան պատանյակ:
Բարեկազմ էր, վայելչագեղ,
Ալիք-ալիք ծամերով,
Պայծառաչվի, ամուր, թիկնեղ,
Գերված-տարված իրենով:
-Միակն եմ ես ողջ աշխարհում
Գեղեցկաշուք, առինքնող,-
Կրկնում էր Նարցիսն անվերջ՝
Անձնամեծար, ինքնագով,-
Չկա ոչ ոք ինձ հավասար,
Իմ վեհ սիրուն արժանի,-
Բարբառում էր հպարտաբար
Ամբարտավան պարմանին:
Եվ մերժելով շնորհները

Աֆրոդիտե դիցուհու՝
Բնակվում էր մեն ու մենակ,
Առանց սրտի տիրուհու:

Վես Նարցիսը շատ էր սիրում
Թավուտ գնալ, որս անել,
Համույր որսալ, թռչուն զարկել
Կամ էլ՝ պարապ թափառել:
Մի անգամ էլ, թե ոնց եղավ,
Արահետից խոտորվեց,
Կանաչահյուս անտառուտում
Հանկարծակի մոլորվեց:
Էքոն՝ փերին արձագանքի,
Սիրահարվեց Նարցիսին՝
Նկատելով պատանյակին՝
Ինքնահմա, պաղ ու սին:
Սիրափափագ և վախվորած՝
Թաքնվելով թփուտում,
Հավերժահարսն այդ ամոթխած
Ծածուկ նրան էր դիտում:
-Ո՞վ կա այստեղ,- գոչեց տղան՝
Լուռ զննելով իր չորս դին:
-Այստե՞ղ,- թնդաց արձագանքը՝
Էքոն՝ համրիկ ու լռին:
-Ո՞վ ես արդյոք, մոտի՛կ արի,-
Ասաց խրոխտ, կերկերուն:
-Արի՜,- հնչեց արձագանքը՝
Երկարաշունչ, զրնգուն…

Վահանակիր Զևսի կինը՝
Դժնի Հերան զայրացած՝

Համրացրել էր փերուն ընդմիշտ՝
Դարձնելով լռակյաց,
Դրա համար նա պապանձված,
Համրալեզու, լուռ ու մունջ
Կրկնում էր վերջին բառը,
Արձագանքում համրաշունչ:
Նիմֆան կարծեց, թե Նարցիսը
Իրեն իր գիրկն է կանչում.
Գոռոզասիրտ արարածին
Տակավին չէր ճանաչում:
Քաղցրաժպիտ, բազկատարած
Դիցանույշը կրակոտ
Խելակորույս, ինքնամոռաց
Փութաճեմեց նրա մոտ:
-Մի կո'ղմ քաշվիր,
Ա'յ անպատկառ,
Ինձ չդիպչե'ս, գնա ե'տ,
Լավ է՝ մեռնեմ, քան շարունակ
Լինեմ կողքիդ ու քեզ հետ:
Ամբարիշտը՝ սաստիկ դաժան,
Կոտրեց սիրտը սիրահար,
Փախավ էքոն այդ անարժան,
Բիրտ վարմունքից վշտահար:
Առ այսօր էլ փերին խոլոր
Արցունքներ է շաղ տալիս,
Դառնաթախիծ, վշտամոլոր
Արձագանքում ու լալիս:

Եվ որոշեց Աֆրոդիտեն՝
Ծովածնունդ, փրփրածին,
Մի լավ դաս տալ, հավետ պատժել
Ինքն իրենով գերվածին,

Որ մերժում է հեգ կույսերի
Զուլալ սերը անաղարտ,
Վերջ է տալիս իղձ-հույսերին
Գոռ պահվածքով մեղապարտ,
Որ չի հարգում, չի մեծարում
Իրեն՝ շենշող կիպրուհուն,
Ծաղկափթիթ, գեղեցկանազ,
Ոսկեգիսակ դիցուհուն:
Կիպրոսածինն այնպես արեց,
Որ Նարցիսը մեկընդմիշտ
Սիրահարվի ինքը իրեն,
Տեսնի կսկիծ, սուգ ու վիշտ,
Վավաշալից կրքից այրվի՝
Սիրահառաչ, տրտմամաշ,
Անպատասխան սիրուց հալվի,
Քիչ-քիչ լինի հալումաշ:

Գարնան մի օր, երբ Նարցիսը
Մոտիկ գնաց վտակին,
Որսից հոգնած և ծարաված՝
Հագուրդ տալու պապակին,
Բյուրեղային ջրի միջին
Զքնաղ էակ նկատեց,
Հրաշագեղ արարածով
Ամբողջովին զմայլվեց:
Գլխի չընկավ, որ շարմաղան
Երիտասարդն այդ թովիչ
Ինքն է, որ կա, արտացոլքն իր՝
Գրավչաղեմ, հմայիչ:
Ակնասևեռ նայում էր լուռ
Ջինջ, ջրեղեն հայելուն,
Չէր կշտանում ակնահաճո

Յոլք-տեսիլքին հայելուց:
Թևատարած մոտենում էր,
Ծնկում էր, որ համբույր տա,
Սիրատոչոր, հրաբորբոք
Բոց-տենչանքին հագուրդ տա:
Ցավոք, նրա հուր-շուրթերը
Դիպչում էին ջրերին,
Հպարտության հետևանքով
Դարձել էր նա իր գերին:
Համակվելով բուռն սիրով՝
Խելքը գլխից թռցրեց,
Ուտելիքը մտքից հանեց,
Քուն ու դադար կորցրեց,
Մտացնոր ման էր գալիս,
Կականում էր, կուրծք ծեծում,
Ինքը իրեն հարց էր տալիս,
Խորունկ ցավից հեծեծում.
-Ո՞վ ես, ասա՛, գո՛յ անծանոթ,
Խարտիշահե՛ր գեղանի,
Լսո՞ւմ ես ինձ, դե շուտ խոսի՛ր,
Պատասխա՛ն տուր, ձա՛յն հանի:
Մի կողմ թողած գոռոզություն՝
Ընկել եմ քո ետևից,
Ա՛յ սառնասիրտ, դաժա՛ն, անգո՛ւթ,
Ինչո՞ւ ես զուր մերժում ինձ:
Ոտով-գլխով հմայել ես,
Հպարտ սիրտս գողացել,
Լոկ քո մասին մտածելով՝
Պարծանքս եմ մոռացել:
Ե՛լ, դո՛ւրս արի ջրի միջից,
Էլ խելքահան մի՛ անի,

Ա՜խ, ինչո՞ւ ես ինձ անտեսում,
Ա՛յ անողորմ պարմանի:

Նարցիսն ընկավ մտքերի մեջ,
Նորեն նայեց գետակին,
Յուր պատկերը այնտեղ տեսավ,
Ողբը կապեց լալագին.
-Վա՛յ իմ գլխին, մինչև հիմա
Ինչպես չէի հասկացել՝
Ինքս ի՛նձ եմ սիրահարվել,
Ինքս ինձնո՛վ հիացել:
Երանի՜թե կարենայի
Տարանջատվել ու զատվել,
Երկու անձի վերածվելով՝
Ճնշող ցավից ազատվել:
Համոզված եմ, որ շատ շուտով
Ողջ ուժերս կլքեն,
Եվ կայցելեմ մութ Հադեսին՝
Մռայլատես ու դժխեմ,
Կմահանամ դեռաբողբոջ,
Հազիվ ծաղկած, կթոշնեմ,
Արդ զգում եմ մահվան շունչը՝
Ահասարսուռ, ժանտաղեմ:
Խեղճ Նարցիսը կամաց-կամաց
Գույնը գցեց, դալկացավ,
Վերջին անգամ ջրի միջի
Լույս-պատկերով հիացավ,
Հյուծվեց, ցնդեց, ինչպես ցողը,
Որն արեգի շողի հետ
Անէանում, չքանում է
Հար-հավիտյան, առհավետ:

Անդ՝ առափնյա խոտի վրա,
Շեկ գլուխը հեզ կքեց,
Արտասվաթոր, հուսակտուր
Մահկանացուն լուռ կնքեց:
Հեկեկացին նիմֆաները,
Էքոն նույնպես լաց եղավ,
Դառնալեղի արցունք թափեց,
Հոգում՝ լիքը վիշտ ու ցավ:
Ըղձանույշներն իսկույնևեթ
Դիակի շուրջ խմբվեցին,
Նրա համար գեղեցկազարդ
Գողտրիկ շիրիմ սարքեցին,
Բայց քիչ հետո նկատեցին,
Որ Նարցիսը վերացել,
Բուրումնաշատ ու նրբագեղ
Մահվան ծաղիկ է դարձել,
Թախծադալուկ ու սիրավեր,
Դեղնաթերթիկ, գլխիկոր,
Տառապագին սիրուց տանջված,
Վշտալլուկ ու վիրավոր:

02.11.12.-04.11.12.



Սիրինգս

Թե ինչպես հավերժահարս Սիրինգսը եղեգ դարձավ...

Հովիտներում ու լեռներում,
Ծառաստանում կուսական
Բնակվում էր ահեղ Պանը՝
Խարդախ Հերմեսի տղան:
Դիոնիսի՝ գինուց հարբած
Շքախումբն էր ուղեկցում,
Այծամարդու՝ ֆավնի տեսքով
Ճամփորդներին վախեցնում:
Տիրակալն էր անտառների,
Հոտի, նախրի պահապան,
Հովիվների հովանավորն
Ու սատարը բնության:

Հավերժահարս Դրիոպեի
Հրեշակերպ այծ-որդին
Ուներ անչափ տարօրինակ,
Զարհուրելի արտաքին:
Այծմորուքով, այծի ոտքով
Կիսամարդ էր, կիսաայծ,
Քաղի նման եղջյուրներով
Արտասովոր արարած:
Պանը երբ որ աշխարհ եկավ,
Մայրը տեսքից սահմռկեց,
Սևորիկ բախտն անիծելով՝
Այլանդակին շուտ լքեց:

Հնարագետ գող Հերմեսը
Իր զավակին գիրկն առավ,
Սրբազնագույն վես Օլիմպոս՝
Աստվածների մոտ տարավ,
Իսկ դիքերը վեհանձնական,
Ծանրաբարո ու լրջմիտ,
Հենց որ տեսան ծիծաղաշարժ
Պան-սատիրին այդ հտպիտ,
Չղիմացան ու փռթկացին
Աղմկալից հրճվանքով,
Հռհռացին, ծանակեցին
Անզուսպ քրքիջ-ծիծաղով:
Անհարգալից ժպիրի վարքից
Խեղկատակը նեղսրտած՝
Լքեց պայծառ նստավայրը,
Ճոխ պալատներն ու գնաց,
Մտավ թավուտ անտառները՝
Կանաչաքող, ծաղկազարդ,
Փախավ դեպի սեգ սարերը՝
Բարձրաբերձ ու հարազատ…

Հովվություն էր անում այնտեղ,
Քաղցրիկ շվին էր փչում,
Զմայլելի ելևէջով
Փերիներին մոտ կանչում:
Նիմֆաները՝ ոգիները
Աղբյուրների, գետերի,
Զմրուխտապատ հովիտների
Ու թավշազարդ լեռների,
Ականջալուր ըմբոշխնելով
Հնչյունները դյութական,

Գեղադայլայլ, հոգեհմա,
Մեղրածոր ու մոգական,
Խմբվում էին շուրջանակի՝
Աշխուժորեն խայտալով,
Զվարթացած ու ցնծագին
Ինքնամոռաց պար գալով:
Աղմկասեր և այծոտն
Պանը նրանց հետևում,
Սատիրների ուղեկցությամբ
Գոռգոռում էր, թռչկոտում,
Քաղի նման ցատկոտելով՝
Խմբապարին մասնակցում,
Զվարճանքից ոգևորված՝
Ձայնը գլուխն էր գցում:
Շուրջբոլորը՝ խիևդ-բերկրություն,
Ողջ բնությունն էր պարում,
Երբ հրճվում էր այծ-աստվածը,
Տոն էր ասես անտառում:
Իսկ տվնջյան հրոտ տապին
Թաքնվում էր թփուտում
Կամ զովասուն քարանձավում
Միափում էր, քուն մտնում:
Բայց վա՛յ նրան, ով որ ֆավնի
Նինջ-անդորրը կխախտեր,
Յասումնալից մարդաայծին
Քաղցր նիրհից կհաներ:
Ձայրագնելով նա կարող էր
Ծանր երազ առաքել,
Անակնկալ հայտնվելով՝
Սարսափելի վախեցնել,
Պանական ահ առաջացնել

Անցորդների մոտ օտար՝
Դարձնելով ահաբեկված,
Վեհերոտ ու դիվահար:
Անողոք էր ցասման պահին,
Բայց եթե չէր բարկանում,
Սիրալիր էր, մեծահոգի,
Բարիքներ էր միշտ անում…

Թե ոնց եղավ, խենթ Էրոսը
Լարեց աղեղն ու թեթև,
Գիրք հարվածով Պանի սիրտը
Խրեց նետը ոսկեթև:
Եվ վերջինս սիրահարվեց
Հավերժահարս Սիրինգսին,
Ով գնում էր որսորդության՝
Նետամանը մերկ ուսին,
Նետ-աղեղը ձեռքը բռնած՝
Որսատեղում պտտվում,
Չորսբոլորը լուռ զննելով՝
Վիթ ու այծքաղ էր փնտրում:
Շատ նման էր կորովաձիգ
Արտեմիսին հմայիչ,
Դիցուհու պես կարճափեշ էր,
Նորատի ու գրավիչ:
Նրբանազուկ այդ գեղուհին
Անողորմ էր, անհոգի,
Վայրագորեն անտեսում էր
Անբիծ սերը ամենքի,
Սիրահետող ասպետներին՝
Հոգատար ու սրտացավ,
Պատճառում էր անասելի

Ծով-դառնություն, վիշտ ու ցավ:
Մերժեց նաև այծամարդուն,
Կոտրեց սիրտը սիրահար,
Տգեղ տեսքից ահասարսափ,
Ապշահար և շանթահար
Սուրաց փերին հողմի նման,
Վազեց, աչքը ուր կտրեց,
Նրա առջև հանկարծակի
Լայնահուն գետ հայտնվեց:
Արտասվալից դիցանույշը,
Ձեռքերն առաջ պարզելով,
Դիմեց գետի զորեղ աստծուն՝
Գութ-փրկություն հայցելով:
Տերը լսեց աղերսանքը,
Գեղեցկուհուն աննկուն
Կարեկցելով սարքեց եղեգ՝
Բարակամեջք ու ճկուն:
Իսկ տարփատենչ այծ-սատիրը
Պագշոտ գգվեց եղեգին,
Փաղաքշելով պիրկ մարմինը՝
Համբույր տվեց կաթոգին:
Տխրեց Պանը, տխրեց սաստիկ,
Որ դիցուհին աղվորիկ
Լքեց իրեն ու մեկընդմիշտ
Դարձավ մատղաշ եղեգնիկ:
Մեղմ սոսափեց թշվառ փերին,
Հեզանազիկ օրորվեց,
Թախծեց Պանը, թախծեց սաստիկ,
Հոնգուր-հոնգուր արտասվեց:
Մի քանի հատ եղեգ հատեց,
Մեղրամոմով ագուցեց,

Ի հիշատակ սեր-Սիրինգսի,
Սրինգ անունը տվեց:

Ասում են, թե այսուհետև
Մարդայածը տրտմաշունչ
Նվագում է այդ գործիքով
Մեղեդիներ քաղցրահունչ:
Մինչև հիմա չի մոռացել
Ըղձանույշին սիրասուն,
Հավերժահարս-եղեգնուհուն՝
Նազելի ու նրբասուն:

08.11.12.-09.11.12.



Ակտեոն

Թե ինչպես Ակտեոնը բարեկազմ
եղջերու դարձավ...

Դրախտային Դելոս կղզում
Աշխարհ եկան երկվորյակ
Զքնաղադեմ Արտեմիսն
Ու Ապոլոնը ցոլարձակ:
Ամպրոպային շանթ-Դիոսի
Աղջնակն էր գեղուհին,
Քաջակորով և անվրեպ
Որսորդության դիցուհին:
Հոգ էր տանում գազանների,
Մարդկանց համար հողեղեն,
Կյանք շնորհում ծիլ ու ծաղկին,
Գորգ-ծածկույթին բուսեղեն,
Բարեմաղթում ծնունդները,
Ամուսնություն, հարսանիք՝
Յանկանալով, որ զույգերը
Կազմեն ամուր ընտանիք:
Առատագութ Արտեմիսը
Ծննդկանին սատարում,
Աստվածային մեծ զորությամբ
Շատ ախտեր էր դարմանում,
Գորովալից հոգածությամբ,
Կարեկցությամբ իր անանց
Վայելում էր ակնածանքը
Հելլադայի ողջ կանանց:

Հմայիչ էր աստվածուհին,

Ծաղկահասակ, բարետես,
Նրա զմրուխտ-աչուկներից՝
Արծվի նման սրատես,
Չէր վրիպում ոչ մի ավար՝
Ո՛չ խազալը երկյուղած,
Ո՛չ թռչնակը, ո՛չ հովազը,
Ո՛չ վարազը հերոտած:
Աղեղնազեն, աշտեն ձեռքին,
Հանդերձանքով կարճափեշ
Թաքնվում էր ծառերի մոտ՝
Սաղարթախիտ, բարձրուղեշ,
Որսորդուհու փորձառությամբ
Նշան բռնում, հարվածում,
Յուր հերթական զոհ-թիրախին
Անշնչացած ցած գցում:
Երբ քայլում էր վեհասքանչ
Դելոսուհին պանծալի,
Նիմֆաների ուղեկցությամբ,
Խինդ-բերկրությամբ ցնծալի,
Պարուրվում էր շրջակայքը
Ուրախաձայն գոռոցով,
Զվարթագին քրքիջներով,
Բարակների հաչոցով:
Որսից հոգնած՝ Արտեմիսը
Շքախմբով, նազենազ
Այցելում էր աղեղնաձիգ
Ապոլլոնին ոսկեմազ,
Ով զարկելով զառ քնարի
Պերճահնչյուն լարերին՝
Ախորժալուր մեղեդիով
Կախարդում էր բոլորին,
Շնորհաշատ մուսաներին,

Փերիներին պարացնում
Եվ պաշտելի քույրիկի հետ
Խմբապարին մասնակցում:
Շոգ կեսօրին՝ կիզիչ տապին,
Աստվածուհին հեռանում,
Քաշվում էր զով վիմանձավը,
Պաղ ջրի մեջ լողանում,
Բայց վա՛յ նրան, եթե մեկը՝
Մահկանացու արարած,
Կխաթարեր սուրբ անդորրը
Կամ կտեսներ մերկացած:

Պատմում են, որ մի երկրավոր՝
Ակտեոնը պատանի,
Տեսել է սեգ Արտեմիսին
Մերկամարմին, հոլանի…
Երիտասարդն ամռան շոգին
Ընկերների հետ մեկտեղ
Կիթերոնի անտառներում
Փնտրում էր լի որսատեղ:
Միջօրեին, երբ որ տոթը
Ահագնացավ, սաստկացավ,
Պատանյակը որսկաններից
Հեռանալով խորացավ
Ու հայտնվեց Գարգափիայի
Հովտում՝ բուրյան ու ծաղկուն,
Նվիրված քաջ, արիասիրտ
Որսորդության դիցուհուն:
Օլիմպիական լռություն էր
Իշխում այնտեղ ամենուր,
Աճում էին եղեմական

Հրաշք-բույսեր թույրիթույր,
Նետանման կիպարիսներ՝
Փշատերև, երկնաձիգ,
Կանաչափայլ եղևնիներ,
Պերճ սոճիներ սլացիկ,
Միտենին էլ մշտադալար,
Ճերմակագույն ծաղկունքով
Հագեցնում էր հոգեպարար,
Արբեցուցիչ բուրմունքով:
Գեղատեսիլ ու զովաշունչ
Գետահովտում անապակ
Խոխոջում էր անուշահունչ,
Լազուրերանգ ջինջ գետակ,
Իսկ խորքերում հարթավայրի՝
Լեռնալանջին զառիվայր,
Ակտեոնի աչքով ընկավ
Թավշականաչ խոր քարայր:
Զարմանք կտրած արարչակերտ
Հրաշալիք պատկերից՝
Քաջասիրտը քայլերն ուղղեց
Դեպի այրը հարակից,
Հանգստավայրն Արտեմիսի,
Ուր ոչ մի մարդ-արարած
Մինչ այդ օրը ոտք չէր դրել
Եվ չէր տեսել մերկացած
Գրավչությունն աստվածուհու՝
Վայելչակազմ, վարդագեղ,
Նորաբողբոջ կոկոն-կուրծքը,
Խաս-իրանը փառահեղ:
Որսկան տղան անճավ մտավ
Այն անպատեհ վայրկյանին,

Երբ մորեմերկ, ազնվաշուք
Զևսի դուստրը գեղանի
Պատրաստվում էր սառը ջրով
Անուշ լոգանք ընդունել,
Առույգացած ու թարմացած
Յուր հանգիստը վայելել:
Նկատելով անծանոթին՝
Նիմֆաները ճչացին,
Բոլորելով Արտեմիսին՝
Լերկությունը ծածկեցին:
Վաղորդայնի արևի պես
Շառագունեց դիցուհին,
Բոցավառվող հուր-աչքերով
Ամոթահար պչրուհին
Է՛լ ավելի սքանչացավ,
Հողմի նման մոլեգնեց,
Տարաբախտիկ պատանյակին
Մի եղջերու դարձրեց:
Ողջ մարմինը մորթով պատվեց,
Ականջները սրվեցին,
Վիզը ձգվեց ու երկարեց,
Ճյուղ-եղջյուրներ բուսնեցին:
Այլակերպված արարածը՝
Բարեկազմ ու վախվորած,
Գետ-հայելում երբ որ տեսավ
Կերպարանքը փոփոխված,
Տրտմաթախիծ լացուկոծեց,
Հանեց հոգոց-թառանչյուն,
Անկարող էր նա այլևս
Արտաբերել բառ-հնչյուն:
Որսաշներն արագ ընկան

Եղջերուի ետևից,
Հալածեցին հեգ կենդանուն
Կիթերոնի ծերպերից:
Զառիթափով, մացառներով,
Ծով-դաշտերով քամու պես
Սլանում էր Ակտեոնը՝
Բարակոտն, գեղատես:
Քերծեները վրա հասան
Ողորմելի էակին,
Ծնկի եկած մարդ-եղջերուն
Հեծկլտում էր տխրագին,
Աչքերի մեջ՝ վիշտ ու սոսկում,
Ափսոսանք և աղաչանք,
Կամենալով բարձր գոչել՝
Հանում էր լոկ հառաչանք:
Արյունարբու շներն իսկույն
Ժանիքները խրեցին,
Խեղճ ու կրակ չորքոտանուն
Պատառ-պատառ արեցին:
Այսպես զոհվեց քաջազունը՝
Ճնչավորը երկրային,
Ով տեսել էր Արտեմիսի
Մերկությունը երկնային:
21.11.12.-22.11.12.

Արաքնե

Թե ինչպես գոռոզամիտ Արաքնեն սարդ դարձավ…

Կա մի զրույց, որ դեռ հնուց,
Հին դարերի շնչի հետ,
Թևածելով հասել է մեզ,
Չի կորնչել առհավետ…
Լիդիայում հռչակված էր
Ոսկեձեռիկ Արաքնեն,
Ով հյուսում էր
Նուրբ գործվածքներ՝
Թափանցիկ ու օդեղեն:
Ամենուրեք հայտնի էր իր
Բարձրաճաշակ արվեստով,
Անկրկնելի, հոգեզմայլ,
Ակնապարար արհեստով:
Շատ հաճախ էլ նիմֆաները
Տմոլոսի լանջերից,
Ականակիտ ու ոսկեբեր
Պակտոլոսի ափերից
Խմբվում էին բոլորակի,
Արարչությամբ զմայլվում,
Սքանչացած ու ակնապիշ
Գերեվարվում, հմայվում:
Ջուլիակուհին, մշուշի պես
Շուրջը դիզված թելերով,
Ինքնամոռաց արարում էր
Ոսկեղենիկ ձեռքերով,
Երկնում դիպակ-կտորները՝

Արծաթահյուս, նախշազարդ,
Անզուգական մետաքսները՝
Նրբանուրբ ու գունազարդ:
Հպարտ էր նա, որ այդ գործում՝
Դժվարագույն, տանջալից,
Չուներ ոչ մի արժանավոր,
Գեթ հավասար մրցակից:

Մեծամտեց վարպետուհին
Եվ մի օր էլ բարձրագոչ
Մրցման կանչեց Աթենասին,
Կույսին հրեց մարտակոչ.
-Ասպարազե՛ն քաջ դիցուհի,
Արի՛ ինձ հետ մրցելու,
Չեմ երկնչում ես քեզանից,
Մե՛կ է, ե՛ս եմ հաղթելու:
Աստվածահոր գլխից ծնված
Աթենասը իմաստուն,
Կապուտաչվի, չքնաղագեղ,
Ազնվափայլ ու խոհուն,
Ունկն դրեց կոչ-խոսքերին,
Պառավի տեսք առնելով,
Ճերմակահեր ու կորամեջք,
Ձեռնափայտին կռթնելով՝
Ամբարտավան Արաքնեին
Անմիջապես հայտնվեց
Ու ծերուհու փորձառությամբ
Խև-անմիտին հորդորեց.
-Ակա՛նջ արա իմ խորհրդին,
Մրցակցության մի՛ կանչիր,
Ծնկի՛ արի, աղո՛թք արա,
Խոնարհաբար աղաչիր,

Որ դիցուհին պայծառաչյա,
Ռազմաշունչ ու զինավառ
Ընդմիշտ ների ու մոռանա
Արարքներդ անպատկառ:
Քո հմտությամբ դու կարող ես
Գերազանցել լոկ մարդկանց,
Հաղթանակել սոսկ հողածին
Աղջիկներին ու կանանց,
Բայց ոչ նրան՝ վեհ Պալլասին,
Որ կույսերին հունական
Ձեռագործ է ուսուցանում
Եվ արհեստներ պատվական:
-Հանգի'ստ թող ինձ, խելա'ռ ջաղու,
Հորդորներդ անարժեք
Տուր հարսներիդ, աղջիկներիդ՝
Ապաշնորհ և անխելք:
Ծերությունը զրկել է քեզ
Բանական ու կուռ մտքից,
Ա'յ անխոհեմ, քո կարճ խելքով
Խրատնե՞ր ես տալիս ինձ:
Իսկ որտե՞ղ է Աթենասը,
Ինչո՞ւ հետս չի մրցում,
Թե վստահ է հաղթությանը,
Ինչո՞ւ ուժը չի փորձում:
-Այստե'ղ եմ ես,- խրոխտ գոչեց
Զևսի դուստրը հաղթական՝
Իսկույնևեթ ընդունելով
Կերպարանքը իսկական:
Ներկաները գետնատարած
Գլուխ տալով ծնկեցին,
Կառափնածին գեղեցկուհուն
Օվսաննաներ ձոնեցին:

Սեգ Արաքնեն անսասան էր,
Հաստատակամ ու լռին,
Խիստ հերստեց ծավիաչյա
Անպարտելի ռազմուհին,
Վարդամատն Էոսի պես՝
Ծիրանաթույր, ալ-բոսոր,
Բոցագունեց ողջ երեսը՝
Ձայրութալի ու խոժոռ:
Վարպետուհին անհողդողդ էր.
Չգիտեր, որ ի վերուստ
Մոյրաները սահմանել են
Դժբախտություն ու կորուստ:

Եվ սկսվեց մրցությունը…
Վեհ դիցուհին գունագեղ
Մեծ ծածկոցին դրվագում էր
Ակրոպոլիսը շքեղ,
Ոսկեթելով պատկերում էր
Փառահեղ ու համարձակ
Օլիմպոսյան աստվածներին,
Ահեղ հորը շանթարձակ,
Ձարդագործում հաղթ դիքերի
Կերպարները աննկուն,
Թելահյուսում իր պատկերը՝
Սաղավարտով շողշողուն,
Թե ինչպես է երկրասասան
Պոսեյդոնի հետ վիճում
Եվ ճոճելով սուր նիզակը՝
Մայր-հողի մեջ մխրճում:
Գոռ Արաքնեն յուր կտավում
Աստվածներին լուսավոր

Ներկայացրեց մահկանացու,
Ապիկար ու մեղավոր,
Զառ-ծածկոցի շուրջբոլորը
Ոստայնանկեց գալարուն
Բաղեղներով ծաղկապսակ՝
Երանգածուփ, զարդարուն:
Անթերի էր աշխատանքը,
Կատարյալ էր իր տեսքով,
Ձեռակերտված գլուխգործոց՝
Շքեղաշուք, ճաշակով:
Ոչ մի բանով այն չէր զիջում
Պալլասի պերճ դիպակին՝
Դրվագազարդ, սքանչագեղ,
Ոսկեճամուկ քանդակին:
Սակայն այնտեղ ջուլիակուհին
Հանել-դրել էր ի ցույց
Աստվածների հանդեպ եղած
Ատելությունն անթաքույց:
Հույժ մոլեգնեց Աթենասը
Ու փոթորկվեց ողջ հոգով,
Պատառոտեց խաս-կերպասը,
Գլխին զարկեց մաքոքով,
Իսկ սևերես մրցակցուհին
Պարան հյուսեց, որ կախվի,
Թել-օղակը վիզը գցի,
Ամոթանքից ազատվի:
Բայց Պալլասը վսեմախոհ
Մահվան ճանկից շուտ փրկեց,
Անհնազանդ ինքնագոհին
Հենց նույն պահին անիծեց.
-Ապրի՛ր այսպես և մշտապես
Կախված մնա ու գործիր,

Սրանից ետք քո ուժերը
Հավասարի՛դ հետ փորձիր:
Այնժամ երբ որ նրան ցողեց
Բուսահյութով մոգական,
Արաքնեի ծամ-հյուսքերը
Տեղնուտեղը վայր ընկան,
Գիրգ մարմինը մի բուռ դարձավ,
Կռացավ ու կծկվեց,
Նենգ մամուկի ձև ստացավ,
Մարդ-կերպարից նա զրկվեց:

Ասում են, թե սույն օրվանից
Մարդ-աղջիկը լռելյայն,
Գլուխը կախ, հմուտ ու վարժ
Գործում է ցանց-սարդոստայն:
Չարացած է աշխարհի դեմ
Ոստայնահյուս Արաքնեն,
Չի մոռացել հին անեծքը,
Ներսում՝ անափ ոխ ու քեն,
Որ փոխել է իր բուն ձևը,
Գիսակները կորցրել,
Որ դիցուհին իրեն ընդմիշտ
Մարդ-մամուկ է դարձրել:

06.11.12.-07.11.12.

Աղոնիս

Թե ինչպես են առաջացել ալ վարդերն ու բնիբուշ հողմածաղիկները...

Ծովի թեթև փրփուրներից՝
Ձյունաճերմակ, ցոլաշող,
Ծնունդ առավ Աֆրոդիտեն՝
Արփիագեղ ու շենշող:
Նրբամաշկ էր, ճերմակաթույր,
Քնքշաքնքուշ՝ խասի պես,
Վարդ-շուրթերով անուշաբույր,
Գեղապսակ, վարդերես:
Ուներ փարթամ, ալիքաձև,
Ոսկեղեղձան գիսակներ,
Երկնի նման լազուրագեղ,
Կորաթարթիչ աչուկներ:
Ազնվատես, բարձրահասակ
Այս պերճաշուք պճնուհին
Դեռափթիթ աղջնակ էր՝
Գեղեցկության դիցուհին:
Ջահելության մարմնացումն էր՝
Հարամնա և անանց,
Որպես սիրո աստվածուհի՝
Տղամարդկանց ու կանանց
Սրտերի մեջ հուր էր ծնում,
Զգացմունքներ արթնացնում,
Ամենազոր իշխանությամբ
Կրքի թակարդն էր գցում:

Օրեաղներն ու քարիսներն

Ուղեկցելով մշտապես՝
Օգնում էին կիթերուհուն՝
Փառապանծ ու ժպտերես:
Եթերային և ոսկեհյուս
Հանդերձներով զարդարում,
Ալեծածան, խարտիշագեղ
Վարսերն էին հարդարում՝
Պսակելով շեկ գլուխը
Ապարոշով փայլփլուն,
Պճնազարդում շլացուցիչ
Ակնեղենով ցոլցլուն:

Երբ ճեմում էր Աֆրոդիտեն
Սիգալով ու նազանքով,
Փթթում էին ծաղիկները,
Օդը լցնում բուրմունքով,
Հրարփին էր վերից ժպտում,
Աչքով անում կիպրուհուն,
Ոսկեճաճանչ բազուկներով
Հուրքոտ գգվում դիցուհուն:
Գազանները ծմակներից
Ելնում էին, մոտ վազում՝
Նկատելով գեղեցկուհուն՝
Վարդաժպիտ ու նազուն:

Սիրահարույց աստվածուհին՝
Վսեմափայլ, ինքնագոհ,
Խենթի նման սիրահարվեց
Ադոնիսին մեծարգո,
Կիպրոսի քաջ արքայազնին՝
Հաղթամարմին, առնական,

Մահկանացու արարածի,
Որ հմայքով մոգական
Գերազանցում ու հաղթում էր
Էակներին հողեղեն,
Մինչև անգամ՝ հելլենական
Զոր դիքերին լուսեղեն:
Հանուն սիրո նա մոռացավ
Օլիմպոսը լուսառատ,
Ե'վ Պատմոսը, և' Կիթերան՝
Ծաղկուն կղզին հարազատ,
Մի կողմ թողեց պերճ պչրուհու
Արդուզարդը ակնակուռ,
Գոհարները, զգեստները՝
Թանկարժեք ու ոսկեհուռ:
Ամբողջ օրը անց էր կացնում
Միրեցյալի հետ մեկտեղ,
Թափառում էր անտառներում,
Փնտրում առատ որսատեղ,
Այրող տապին արևաբարկ,
Եղանակին ամպամած
Զարկում այծքաղ, երկչոտ եղնար,
Նապաստակներ կամ քարայծ:
Փախչում էին ծուռթաթ արջից,
Թրաժանիք վարազից,
Սահմռկելի առյուծներից,
Սարսափածին հովազից:
Աֆրոդիտեն հորդորում էր
Վտանգներից խուսափել,
Հանկարծահաս փորձանքներից
Ամեն գնով ետ կանգնել:

Ադոնիսը գնաց որսի,

Ծանոթ վայրից հեռացավ,
Շների հետ, տեգը ձեռքին
Թավուտի մեջ խորացավ,
Միայնակ էր նա այդ օրը՝
Առանց սրտի տիրուհու,
Ականջ չարեց խորհուրդներին
Խորաթափանց դիցուհու:
Մացառներից հսկայական
Ժանտ վարազը հարձակվեց,
Սուրսայր ժանիք ատամները
Փութով մարմինը խրեց:
Վիրավորվեց պայազատը,
Խորունկ վերքից ահավոր
Առատորեն դուրս էր ժայթքում
Տաք հեղուկը ալ-բոսոր…

Միրելիի մահվան բոթը
Աֆրոդիտեն հենց լսեց,
Անասելի անհուն վշտից
Կարծես խելքը թռցրեց,
Վազեց դեպի մոտ սարերը՝
Ոտաբոբիկ, հերարձակ,
Դեպի անծիր ծառաստանը՝
Զմրուխտագեղ, լայնարձակ,
Անցավ խորին անդունդների,
Մութ կիրճերի եզրերով՝
Բոլորեքյան բոսորաթույր
Արյան հետքեր թողնելով.
Տատասկներից, սուր քարերից
Արնակոլոլ, վիրալից
Վազվզում էր աստվածուհին՝

Հուսահատ ու վշտալից…

Վերջ ի վերջո գտավ նրան,
Ամուր փարվեց դիակին,
Արեց լաց-կոծ, սուգ ու շիվան՝
Սրտակեղեք, թախծագին:
Եվ որպեսզի Ադոնիսի
Հիշատակը մնա վառ,
Աճեց հեղված ալ հեղուկից
Հողմածաղիկ արնավառ,
Իսկ դիցուհու ոտքից հոսած
Կաթիլ-կաթիլ արյունից
Կոկոնեցին շքեղ վարդեր՝
Շառագույն ու բուրալից:
Աֆրոդիտեն ամեն անգամ
Հողմածաղկին նայելով՝
Հիշում էր յուր սիրեցյալին՝
Աղեկտուր վայելով,
Բնությունը ցավակցելով՝
Թառամում էր և տրտմում,
Արեգակը մռայլվում էր,
Ծաղիկները՝ քուն մտնում:

Ամպահալած Զևսը գթաց
Ապերջանիկ դիցուհուն,
Հրամայեց նեռ Հադեսին,
Որ արձակի պատանուն,
Ամեն տարի երկիր թողնի
Մեռյալների աշխարհից,
Որ դիմանա ցավ-մորմոքին
Աֆրոդիտեն տրտմալից:

Ասում են, թե այսուհետև
Արքայորդին կես տարի
Բնակվում է Հիդի մոտ՝
Հարմարվելով խավարին,
Ստվերի պես թափառում է
Խորխորատում մթամած,
Ուր հալածված հոգիները
Կապում են միշտ սուգ ու լաց:
Մյուս կեսը անց է կացնում
Այստեղ՝ երկրի երեսին,
Իր սիրաթով աստվածուհու՝
Կիպրուհու հետ միասին:
Աղոնիսի հարության հետ
Ողջ բնությունն է ցնծում,
Դառնում գունեղ, բուրումնավետ,
Ասես նորից է ծնվում:

13.11.12.-14.11.12.

Ֆաետոն

Թե ինչպես կործանվեց Հելիոսի անխոհեմ որդին՝ Ֆաետոնը...

Հմուտ դարբին Հեփեստոսը՝
Կաղ աստվածը ամրակուռ,
Արեգակի համար կռեց
Ճոխ երկանիվ ոսկեհուռ,
Որով ամեն արշալույսին,
Երբ Էոսը դիցուհի
Բաց էր անում դարպասները
Վարդագունող երկնքի,
Ոսկեշողիկ հուր-Հելիոսը
Օվկիանոսի ափերից
Ձիանք լծած ելնում էր վեր,
Հուրհրատում բարձունքից,
Տիեզերքին ի ցույց դնում
Հանդերձանքը ցոլցլուն,
Շողակնափայլ թագ-պսակը՝
Աղամանդով զարդարուն,
Իր կենսախինդ, ծիրանավառ
Ճաճանչներով շողշողում,
Կյանք էր տալիս ողջ աշխարհին,
Լույս-ջերմությամբ ողողում:
Մայրամուտին իջնում էր ցած՝
Օվկիանոսը ջրառատ,
Ոսկեզօծված վառ մակույկով
Լողում դեպի պերճ պալատ,
Որ կերտել էր Հեփեստոսը
Մաքուր ոսկուց, արծաթից,

Հազարերանգ բյուր քարերից՝
Արևակնից, ալմաստից…
Արմանք-զարմանք ապարանքում՝
Ակնախտիտ, երփնավառ,
Կանգ էր առնում արեգակը՝
Հոգնությունից ուժասպառ,
Նիրհ էր մտնում մի աչքը բաց,
Չլինի թե, մոռանա,
Անուշ-անուշ քնով ընկնի,
Այգաբացից ուշանա:
Բայց մի անգամ զոր Հելիոսը՝
Դառնակսկիծ, տխրամած,
Լուսածագին երկինք չելավ,
Խախտեց կարգը սահմանված…

Թե ոնց եղավ, Էպափոսը՝
Զևսի ուստրը մեծամիտ,
Անվանարկեց արևորդուն՝
Ֆաետոնին պարզամիտ.
-Չե՛մ հավատում, որ զավակն ես
Դյուցազնազարմ արեգի,
Որդին ես սոսկ մի անցավոր
Ու երկրածին էակի:
Վիրավորված պատանյակը
Աղի-լեղի արտասվեց,
Նետվեց գիրկը Կլիմենեի,
Նեղսրտելով գանգատվեց.
-Ո՞վ է հայրս, ասա՛, մայրի՛կ,
Աղաչում եմ, չխաբես,
Ասում են, թե որդյակը չեմ
Հրարփիի ժպտերես:

-Երդվում եմ ես զառ Հելիոսով,
Տղան ես դու արևի,
Թե ստում եմ, թող որ հայրդ
Լույսից առմիշտ ինձ զրկի:
Չե՞ս վստահում իմ խոսքերին,
Վե՛ր կաց, գնա՛ նրա մոտ,
Թող հավաստի ասածներս
Արեգակը կրակոտ:
Կասկածամիտն անմիջապես
Գնաց հորը տեսնելու,
Իր ծագումը հաստատելու,
Երկմտանքը ցրելու,
Մտավ նրա արքունիքը՝
Շողակնաշող, ցոլարձակ,
Գահին բազմած թագակիրը
Հյուրընկալեց համարձակ
Ֆաետոնին մահկանացու,
Ով եկել էր այդքան մոտ
Պայծառափայլ արեգակին՝
Բոցակիզող ու հրոտ:
Բայց և այնպես երկրավորը
Յուր աչքերով հողեղեն
Ի զորու չէր դիմակայել
Հրացոլքին լուսեղեն,
Ուստի արփին մեծահոգի
Շողապսակը հանեց,
Շփոթահար Ֆաետոնին
Հոգածությամբ հարցրեց.
-Այդ ինչո՞ւ ես մոտս եկել,
Չե՞ս վախենում այրվելուց…
-Մե՛ծն Հելիոս վսեմաշուք,
Խնդրո՛ւմ եմ, տո՛ւր ապացույց,

Որ զավակն եմ քո սիրասուն,
Աստվածազարմ ու անգին,
Որ մայրիկս ճիշտ է ասում,
Դո՛ւ ես հայրս թանկագին:
-Հարկա՛վ, որդի՛ս, իրա՛վ է նա,
Չի դրանում համոզվես,
Ինչ որ սիրտդ այժմ ուզի,
Ինչեր ցանկաս, կտամ քեզ:
Միավասիկ ուխտ եմ անում
Ստիքս գետով սրբազան
Վաղվաղակի իրագործել
Ցանկություններ այլազան…
-Դե ուրեմն թո՛ւյլ տուր, հայրի՛կ,
Երկանիվդ ես վարեմ,
Գոնե մի օր երկինք ելնեմ,
Բարձունքներում թափառեմ:
-Ա՜յ քեզ խելառ, ցնորամիտ,
Ի՞նչ ես ինձնից արդ խնդրում,
Խելքդ լրիվ ե՞տ ես տվել,
Մի՞թե մահ ես դու փնտրում:
Կառք քշելը կատակ բան չէ,
Պահանջում է հմտություն,
Մինչև անգամ աստվածները
Չունեն այնքան զորություն՝
Դիմանալու նժույգներիս
Բոց-սլացքին հրեղեն,
Որ ճիշտ վարեն երկանիվը,
Հանկարծ ուղուց չշեղվեն:
Երկնակամարն առլեցուն է
Սարսափներով, վտանգով,
Եթե դույզն-ինչ ես խոտորվեմ,
Կհատուցեմ իմ կյանքով՝

Հանդիպելով Կենտավրոսին,
Ահեղ Ցուլին պոզավոր,
Այծեղջյուրին, հաղթ Առյուծին,
Սև Կարիճին թունավոր…
Նախ և առաջ ընթանում եմ
Արահետով զառիվեր,
Խոտորնակ է ճանապարհս,
Չորս ձիերս անվեհեր
Դժվարավ են առաջ գնում,
Ջոռով վեր են բարձրանում,
Մի կերպ քաշում երկանիվը,
Ուղեծրում շունչ առնում,
Որ հիմա էլ դարիվայրով
Ահագնաթափ իջնեն վար,
Ու թե փոքր-ինչ ծռվեմ-շեղվեմ,
Կկործանվեմ անպատճառ:
Քանի շուտ է, հրաժարվի'ր,
Որոշումից ե'տ կանգնիր,
Փորձությունից հեռո'ւ մնա,
Կյանքդ զուր մի' վտանգիր,
Ակա'նջ արա խորհուրդներիս,
Չեմ ուզում, որ կործանվես,
Գերի ընկնես նենգ Հադեսին՝
Մռայլադեմ, դժնատես:
Աներեր էր Ֆաետոնը,
Ոչ մի կերպ չէր նահանջում,
Անտեսելով հորդորները՝
Երկանիվն էր պահանջում,
Եվ վասնզի ակն-արևը
Անխախտ երդում էր տվել,
Անկարող էր նա այլևս
Սուրբ խոստումից ետ կանգնել:

Հենց այդ օրն էր եղերական,
Որ հրարփին տարաբախտ
Վաղորդայնին երկինք չելավ՝
Խաթարելով կարգն անխախտ…

Ահա կառքը արեգ-աստծո՝
Հազարաթույր քարերով,
Ահա զորեղ նժույգները՝
Սնված-պահված նեկտարով,
Մոտ է պահը այգալույսի,
Ջերմ Հելիոսը խև որդուն
Վստահում է շող-պսակը,
Երկանիվը պսպղուն,
Մտահոգված նրա բախտով՝
Վերջին խրատն է կարդում,
Անհանգիստ է զգայուն սիրտը՝
Մահագուշակ ու տրտում:
-Լսի՛ր, տղա՛ս, ուշիուշով,
Պախուրցները կձգես,
Ուղիղ կանցնես անվահետքով,
Կոր կամարից չշեղվես,
Թե մի փոքր շատ բարձրանաս,
Բիլ երկինքը կխանձես,
Թե սրընթաց ներքև իջնես,
Մայր-երկիրը կհնձես:
Դե՛, շո՛ւտ արա, մի՛ հապաղիր,
Լուսաբացն է սպասում,
Եթե միտքդ դեռ չես փոխել,
Գործեր ունես դու բազում:
Ֆաետոնը հաստատակամ,
Ձիակառքով անվանի

Հանդիսավոր ուղևորվեց
Դեպ երկինքը ծիրանի,
Քիչ անց վախով գլխի ընկավ,
Որ անփորձ է ու անզոր,
Որ չի կարող սանձահարել
Նժույգներին թևավոր:
Փոշմանել էր արեգորդին
Արարմունքից անհեթեթ,
Սակայն, ավա՜ղ, էլ չէր կարող
Վերադառնալ դեպի ետ…
Սահմռկում էր Ֆաետոնը
Խոլ ձիերի սլացքից,
Լեղին ահից ջուր էր կտրում,
Երբ դիտում էր բարձունքից,
Իսկ կամարում նրան արդեն
Սպառնում էր ահավոր
Մահաղեղով լի կարիճը՝
Հրեշային, նենգավոր:
Պատանյակը է՛լ ավելի
Ահաբեկվեց, գունատվեց,
Բաց թողնելով սանձափոկը՝
Նժույգներին ազատեց:
Վարգաձիերն օտարոտի
Կառապանից խրտնած՝
Սուրում էին օձագալար՝
Երկնի ծիրը կորցրած,
Մե՛ռք կատաղի վեր բարձրանում
Մինչ աստղերը գիսավոր,
Մե՛ռք շեշտակի ներքև իջնում,
Կիզում հողը բեղմնավոր:
Արեգակի քույր Սելենեն՝
Լուսնի չքնաղ դիցուհին,

Նայում էր իր եղբոր կառքին՝
Անկառավար, զարտուղի,
Թե ինչպես է ուղեկորույս
Տիեզերքը մոխրացնում,
Բոցալեզու կրակներով
Հրո ճարակ դարձնում՝
Հրդեհելով Հելիկոնը,
Պառնաս լյառը սրբազան,
Անտառապատ Կիթերոնը,
Սեգ լեռները Կովկասյան...
Ամենուրեք ծուխ ու մոխիր,
Խանձահոտ ու վայնասուն,
Մխում էին ավանները,
Այրվում մարդ և անասուն,
Ողջ ծովերն ու գետակները
Եռում էին կրակից,
Մայր-երկիրը ճաք էր տալիս
Ջերմությունից ու տապից,
Լույսի շողն էր ներթափանցում
Աիդի մոտ մթամած,
Չդիմացավ երկիր- Գեան,
Չևսին դիմեց ահագնած.
-Օ՜, գերագո՛ույն, օգնի՛ր, փրկի՛ր,
Լեզվակները բոցեղեն
Կլանում են երկինք, երկիր,
Քաղաք ու շեն, բուսեղեն…
Տե՛ս, Ատլասը հազիվհազ է
Երկնակամարը պահում,
Մի՞թե դարձյալ սպառնում է
Քաոս, խավար, կործանում…
Քրոնոսածինն ունկն դրեց
Աստվածուհու խնդրանքին,

Ճեպով նետեց ցոլք-կայծակը,
Մարեց հրդեհն ու կրկին
Մեկ այլ շանթով սրաթռիչ
Կոտրեց կառքը ոսկեղեն,
Դես-դեն փախան նժույգները՝
Գեղեցկաբաշ, հրեղեն:
Ցրիվ եկավ երկանիվը,
Ֆաետոնը հրկիզված՝
Լուսապայծառ ասուպի պես
Սրարշավեց դեպի ցած:
Ապաբախտը ջուրը ընկավ,
Նիմֆաները ողբագին
Էրիդանոս գետի ափին
Ամփոփեցին նրա դին:
Իսկ Հելիոսը որդեկորույս
Ծածկեց դեմքը խոժոռված,
Ամբողջ օրը խռովահույզ՝
Մութ երկնքում չերևաց:
Ցայսօր էլ դեռ նա մերթընդմերթ
Սքողվում է ամպերով,
Դատարկում է լցված սիրտը՝
Արցունք-անձրև թափելով:
Խեղճ Կլիմենեն դառնահեծեծ
Սուգը կապեց տխրալից,
Հելիադները արևուհի
Եղան նրան վշտակից:
Խոր կսկիծից նրանք դարձան
Երկնասլաց բարդիներ,
Աղջիկները մինչև օրս
Արտասվում են թախծաբեր…
Գլուխները Էրիդանոս
Գետի ափին հակելով՝

Իրենց եղբոր մահն են սգում՝
Խեժ-արտասուք թափելով:
Սառը ջրում կաթիլները՝
Թափանցիկ ու դառնագին,
Վերածվում են դեղին սաթի՝
Ոսկեփայլ և թանկագին:
Ֆաետոնի մահից հետո
Մոտ ընկերը տրտմաշուք
Տեղնուտեղը դարձավ կարապ,
Որ ողբում է սրտմաշուկ:
Կիկնոս-հավքը ապրում է միշտ
Լազուրային ջրերում,
Հոգում լեցուն մորմոք ու վիշտ՝
Մահվան երգն է գեղգեղում
Եվ հիշելով հելիոսորդու
Պատահարը թախծալից՝
Տագնապահար խույս է տալիս
Բոցավառվող կրակից:

24.11.12.-26.11.12.

ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԼԵԳԵՆԴՆԵՐ

Բժիշկ գորտը

Ճահճի միջին՝ հենց կենտրոնում,
Ճահճաբնակ գորտն էր կենում,
Թիթեռ, մոծակ, ճանճ էր բռնում,
Հետն էլ կռռում ու կռկռում
Եվ ճահճուտի կենվորներին
Խիստ ձանձրացնում,
Գլուխ տանում:
Միապաղաղ, անդուր կյանքից,
Հոտած վայրից ու տաղտուկից
Գորտ եղբայրը սաստիկ հոգնեց,
Կացարանը շուտով լքեց:
Ուզեց՝ ինքն էլ աշխարհ տեսնի,
Ցամաք դուրս գա, հեշտ գործ գտնի,
Հնար անի, փող աշխատի,
Իր գլուխը այդպես պահի:
Ճահճից ելավ և որոշեց
Բժիշկ դառնալ, հիվանդ բուժել:
Ու մի օր էլ ողջ անտառի
Գազաններին իր մոտ կանչեց,
Ի լուր բոլոր ներկաների՝
Հպարտորեն հայտարարեց.
-Ես բժիշկ եմ, շատ լավ գիտեմ
Իմ այս գործը, դա է ինձ միշտ
Ապացուցել կյանքիս փորձը:
Թե ունենաք դուք ջերմություն,
Գրիպ, հարբուխ, մրսածություն,
Դեղնախտ, խոզուկ, ատամնացավ,
Փորլուծություն կամ գլխացավ,

Մոտս եկեք, ես կգնեմ,
Տակից-գլխից ձեզ կքնեմ,
Դարման կանեմ, կբժշկեմ,
Ճար կգտնեմ և կփրկեմ:
Երկարաձիգ անմիտ ճառը
Երբ ավարտեց, ծեր աղվեսը
Իմաստակին պախարակեց.
- Գո՞րտն էլ արդյոք բժիշկ լինի,
Այդ ամենից, ա՛յ անճոռնի,
Դու իսկի էլ չես հասկանում
Կամ այնքան ես գլուխ հանում,
Որքան էշը՝ անուշ նշից,
Կամ էլ խոզը՝ պտտաձողից:
Գիտունիկ ես քեզ հռչակել
Ու գլխներիս հեքիմ դառել,
Ա՛յ սառնարյուն, ա՛յ ինքնակոչ,
Մեծաբերա՛ն, հիմա՛ր, անպո՛չ:
Հայելու մեջ տեսե՞լ ես քեզ,
Գիտե՞ս, թե ինչ այլանդակն ես,
Հիվանդոտ ես, դեղնած-մեղնած,
Աչքերդ էլ բնից ելած
Եվ դուրս ցցված,
Լպրծուն ես ու գարշելի,
Բշտիկապատ, զարհուրելի:
Քո այս տեսքով շատ նման ես
Դու հիվանդի: Թե կարող ես,
Նախ և առաջ քեզ բժշկիր,
Հետո միայն դու մեզ բուժիր,
Մահից փրկիր:
09.08.08.

Պարծենկոտ բզեզը

Բզեզը աղբը
Փորեց, փորփրեց,
Կուշտ ու կուռ կերավ
Ու մի լավ փքվեց,
Գլուխը աղբից
Դանդաղկոտ հանեց,
Ծույլ հորանջելով
Ամպերին նայեց:
Նկատեց հեռվում՝
Անծիր երկնքում,
Հզոր արծիվն է
Սուրում բարձունքում:
Բզեզ-մզեզը
Խիստ վիրավորվեց,
Յուրայիններին
Նեղսրտած ասեց.
-Ապա մի նայեք
Էն արծվի տեսքին,
Նրա թևերին,
Սուր-սուր ճանկերին,
Կեռ կտուցը՝ թուր,
Մարմինը՝ ամուր,
Ու ինքն էլ՝ ասես
Մի թեթև փետուր:
Երբ ուզում է,
Մինչ ամպերն է
Նա սլանում,
Անծայրածիր

Հեռուներն է
Թռչում-գնում:
Իսկ ե՞ս ինչ եմ.
Ո՛չ սողուն եմ,
Ո՛չ թռչուն եմ,
Բայց չէ՞ որ
Ե՛ս էլ թռչում եմ:
Մի՞թե արծվից
Պակաս եմ ես,
Ե՛վ թևավոր,
Ե՛վ սրատես,
Կուզեմ ես էլ
Թռչուն դառնալ,
Հեռուները,
Բարձունքները
Թռչել-գնալ:
Մեծամտեց
Ինքնահավան
Բզեզիկը
Ու բարձրացավ
Ջինջ երկինքը,
Իսկ երբ ուզեց
Լուրթ կամարում
Արծվին հասնել,
Կտրել-անցնել,
Հանկարծ ուժեղ
Քամի փչեց,
Պարծենկոտին
Աղբակույտի
Մեջը գցեց:
Բզեզն աղբը

Դարձյալ կերավ
Ու կշտացավ,
Թռչուն դառնալն
Իսկույնևեթ
Նա մոռացավ:

03.08.08.

Երջանկությունը

Ասում են՝ մարդը
Աստծո մոտ գնաց,
Պատմեց ցավ-դարդը,
Բախտից տրտնջաց,
Բողոքեց խղճուկ,
Անողոք կյանքից,
Իր տխուր հալից,
Թշվառ վիճակից:
Նա այնքան ողբաց,
Որ Տերը խղճաց,
Երջանկությունը
Տակառը լցրեց,
Բերանը կնքեց
Ու նրան տվեց:
Վերջում պատվիրեց,
Որ ամեն դեպքում,
Ինչ էլ պատահի,
Կնքված նվերը
Ընդմիշտ փակ պահի:
Մարդը տուն հասավ,
Էլ չդիմացավ,
Տիրոջ հորդորը
Իսկույն մոռացավ,
Տակառը բացեց,
Քիթը ներս խցկեց,
Բայց ափսո՜ս, ավա՜ղ,
Ոչինչ չգտավ:
Ահա թե ինչպես

Գոյ-արարածը
Երջանկությունը
Ձեռքից բաց թողեց,
Երկինք թռցրեց:
Եվ այդ օրվանից
Կրկին տառապում,
Փնտրում է նրան
Ու էլ չի գտնում:

02.08.08.

Զևսն ու կրիան

Զևսը մի օր խնջույք սարքեց,
Առատ ու ճոխ սեղան բացեց
Եվ անտառի կենվորներին
Ճաշկերույթի հրավիրեց:
Ընդունելով հրավերը՝
Ներկա էին ողջ հյուրերը,
Միայն Աստծուն մերժել միայն
Ու չէր եկել ծերուկ կրիան:
Հյուրընկալը դիմավորեց,
Ներկաներին սրտանց դիմեց.
-Դե՛, սիրելի՛ բարեկամներ,
Եկեք, նստեք, մի՛ ամաչեք,
Կերակուրներ անուշ արեք,
Երգեք, պարեք, ուրախացեք:
Լի ուտեստներ, կարմիր գինի,
Սրանից լավ ի՞նչ կլինի…
Առյուծ արքան գինին բացեց,
Գավաթները մեկ-մեկ լցրեց,
Շեկ աղվեսը կենաց ասեց,
Զևս-Դիոսին փառաբանեց:
Սոխակն անուշ երգ դայլայլեց,
Ծուռթաթ արջը ելավ, պարեց,
Կապիկն արջի տնազն արեց
Եվ բոլորին զվարճացրեց:
Խաղ ու խնդում, ծափ ու ծիծաղ,
Խնջույքն այսպես ուրախ անցավ:
Զևսը մի լավ հյուրասիրեց,
Ինչպես կարգն է, հարգեց,

Պատվեց ու տուն ճամփեց:
Կերուխումի հաջորդ օրը
Իր մոտ կանչեց և հարցրեց
Ծեր կրիային.
-Որտե՞ղ էիր,
Ինչո՞ւ չեկար խրախճանքին:
Իսկ նա ասաց.
-Իմ տանն էի, էլ ո՞ւր պիտի,
Չէ՞ որ ամեն մեկն էլ գիտի,
Որ իր տնից լավ տեղ չկա…
Այս որ լսեց,
Շանթարձակը հույժ զայրացավ,
Համարձակին ցասկոտ ասավ.
-Սրանից ետք ուր էլ գնաս,
Տունդ մեջքիդ պիտի ման տաս:
Ասում են, թե այդ օրվանից
Կրիան ուր էլ որ գնում է,
Իր պատյանը շալակում է,
Հետը տանում,
Բայց զրահի ծանրությունից
Շուտ հոգնում է,
Դանդաղում է և ուշանում:

09.01.02.

Մոծակն ու եզը

Մոծակն եկավ ծանր ու մեծ
Եզան պոզին հպարտ նստեց,
Ինչքան տզզաց, տզտզացրեց,
Եզը բանի տեղ չդրեց,
Նա իր խոտն էր դանդաղ ծամում
Ու անտարբեր հեռուն նայում:
Տզտզանը պարապ-սարապ
Այնքան նստեց, որ ճանձրույթից
Ինքն էլ հոգնեց: Ոտքի ելավ,
Որ հեռանա, այլ տեղ գնա,
Մեկ էլ հանկարծ միտքը փոխեց,
Նրան ասեց.
-Ձեն չես հանում, ա՛յ եզ ախպեր,
Չեղար դու ինձ զրուցընկեր,
Ի՞նչ ես ասում, թողնեմ-գնա՞մ,
Թե՞ ուզում ես քիչ էլ մնամ:
Երբ մոծակի ձայնը լսեց,
Եզն աչքերը վերև տնկեց,
Զարմանք կտրած
Դես-դեն նայեց,
Բայց փոքրիկին չնշմարեց:
-Ո՛չ քո գալն եմ ես իմացել
Ու դրանով ուրախացել,
Ո՛չ էլ գնալդ կիմանամ,
Առանց քեզ էլ կդիմանամ:
Կյանքն է այսպես.
Մոծակի պես
Մարդը որքան

Աննշան ու փոքր է լինում,
Այնքան իրեն
Նա մեծ բանի տեղ է դնում:

06.08.08.

Խարդախ փիսոն

Գող փիսիկը մառան մտավ,
Փորը լցրեց, ինչ որ գտավ,
Իսկ վախվորած մկնիկները
Արտապատառ ճողոպրեցին,
Թաքնվելով մութ խորշերում՝
Կատվի ճանկից ազատվեցին:
Քկլիկ փիսոն հապճեպորեն
Ճկուն խելքին տվեց գոռը,
Որ մկներին խարդախորեն
Ծակից հանի, լցնի փորը:
Չարամիտը մեխից կախվեց,
Շունչը պահած պատին գամվեց,
Փայտի նման անշարժացավ
Ու սուտ սատկած նա ձևացավ:
Մի հերոս մուկ,
Իր բնումը ասլան կտրած,
Կատվին ասաց.
-Հե՜յ, փափկամա'զ,
Թեկուզ տեղով
Տոպրակ դառնաս,
Պատից կախվես,
Չես խաբի մեզ:
03.05.11.

Կատուն՝ քահանա

Կատուն տերտեր ձևացավ,
Սև սքեմը գողացավ,
Երկար մորուք կպցրեց,
Խաչը վզից կախ տվեց,
Իրար գլուխ ժողովեց
Ավանի ողջ մկներին,
Իրեն սրբի տեղ դրեց,
Հայտարարեց բոլորին.
-Այս համայնքի տերտերն եմ,
Ձեր փրկիչն ու ձեր Տերն եմ,
Մոտս եկեք, մոմ վառեք,
Աղոթե՛ք, ապաշխարե՛ք,
Որ մկրտեմ, մեղքից փրկեմ,
Մահից հետո մեկիկ-մեկիկ
Առոք-փառոք դրախտ դրկեմ:
Գորշ մկնիկը բայց հո տեսավ,
Որ գող փիսոն վանքը մտավ,
Խաչը կախեց, տերտեր դառավ,
Հրեշտակի կերպար առավ:
Վախկոտ մուկը համարձակվեց,
Ինքնակոչին հանդիմանեց.
-Ո՞վ է տեսել կատուն՝ տերտեր,
Գա ու կանգնի մեր գլխին տեր:
Լավ է՝ առանց կնքվել մեռնենք,
Դժոխք ընկնենք, քան մկրտված,
Մեղքից փրկված փորդ մտնենք:
04.08.08.

Ուղտն ու եզը

Սապատավոր ուղտը մի օր
Գլուխը կախ, մտամոլոր
Փուշ էր ուտում, մեկ էլ հանկարծ
Եզը տնկվեց նրա դիմաց:
Ուղտը երկար նայեց եզին
Ու նախանձեց սուր-սուր պոզին,
Ելավ-գնաց Արարչի մոտ,
Գանգատ արեց խիստ զայրացկոտ.
-Ինչի՞ս է պետք ծուռ սապատը,
Ինչո՞վ եմ ես եզից վատը,
Ես էլ կուզեմ պոզ ունենամ,
Կոտոշներով հպարտանամ:
Երկնավորը հույժ բարկացավ
Եվ կուզիկին կտրուկ ասավ.
- Գոհացի՛ր քո ունեցածով,
Բոյ-բուսաթով, լեռ-սապատով:
Տերը նրան պոզ չտվեց,
Դեռ ավելին, որպես պատիժ,
Ականջներն էլ բռնեց-կտրեց:
Թող դաս լինի սա ամենքին
Եվ հասկանան, որ ոչ մեկին
Չի կարելի ո՛չ նախանձել,
Ո՛չ էլ աչքը մեկ ուրիշի
Ունեցածի վրա տնկել:

30.07.08.

Աղվեսն ու կռունկը

Ծեր աղվեսը շիլա եփեց
Եվ կռունկին հրավիրեց.
Որոշել էր, որ ձեռք առնի,
Դատարկ փորով նրան ճամփի:
Ճաշը լցրեց ողորկ քարին
Ու իր հյուրին տնավարի
Հյուրասիրեց, մի լավ ծաղրեց:
Խեղճ թռչունը ինչքան կտցեց,
Քաղցած փորը բան չգցեց,
Իսկ շեկլիկը շիլան լափեց,
Ուռավ-փքվեց, դունչը սրբեց,
Մի կողմ քաշվեց:
Բայց կռունկը, արի ու տես,
Գլխի ընկավ, որ չար աղվեսն
Իրեն խաբեց, իր տուն կանչեց,
Այդպես ծաղրեց ու ծիծաղեց,
Դատարկ փորով,
Սոված-ծարավ ճանապարհեց…
Չնայած որ քանի ամիս
Դեպքից անցավ,
Կռունկի թունդ բարկությունը
Չմեղմացավ:
Երկար-բարակ նա մտածեց,
Գցեց-բռնեց, թե ինչ անի,
Թե ոնց անի, որ խարդախին
Տեղը դնի, ոխը հանի:
Նա աղվեսին հրավիրեց,
Երկար ու նեղ կժի միջին

Համով ճաշը լիքը լցրեց,
Խորամանկի առջև դրեց:
Շեկլիկն առավ բույրը ճաշի,
Ուզեց իսկույն փորը քաշի,
Շրթունքները լավ լպստեց,
Ախորժակը շատ գրգռվեց,
Ստամոքսը սովից գոռաց,
Ու բերանի ջուրը գնաց:
Կռունկն առանց դժվարության
Երկարավուն սուր կտուցը
Կուժը կոխեց, անուշ արեց,
Իսկ աղվեսը ինչքան էլ որ
Սափորի շուրջ պտույտ գործեց,
Ինչքան էլ որ քիթը խոթեց
Եվ հոտոտեց,
Փորը ոչինչ նա չլցրեց:
Փոր ու փոշման, սոված-ծարավ,
Գլուխը կախ ճամփա ընկավ:
Այսպիսին է չարի վերջը.
Ով փոս փորի, կընկնի մեջը:
03.08.08.

Ագռավն ու աղվեսը

Սև ագռավը պանիրն առավ,
Հսկա բարդու ճյուղին թռավ,
Իսկ աղվեսը, փորը վեց-վեց,
Ծառի կողքին մեկեն տնկվեց
Ու միտք արեց, թե ոնց անի՝
Ուտելիքը տակով անի:
Քիչ մտածեց, գտավ ելքը
Եվ սկսեց իր գովերգը.
-Էս ի՜նչ սիրուն ագռավ ես դու,
Հրաշագեղ, գեղեցկատես,
Իմ ողջ կյանքում քեզ պես չքնաղ
Ոչ մի թռչնակ չեմ տեսել ես:
Դու՝ տեղովդ հուրի-փերի,
Հեզիկ-նազիկ, կարմրաթուշ,
Քաղցրիկ երգդ ինձ կգերի,
Մատաղ լինեմ ձայնիդ անուշ:
Ագռա'վ քույրիկ, շա՜տ եմ խնդրում,
Մի տաղ ասա, ձայնդ լսեմ,
Քանի օր է քեզ եմ փնտրում,
Որ խնդրանքս ես քեզ ասեմ:
Խորամանկի ասածներին
Միամիտը ականջ դրեց,
Կեղծ, սուտումուտ ներբողները
Հալած յուղի տեղ ընդունեց:
Իրեն քնքուշ բլբուլ կարծեց,
Կոկորդով մեկ աղաղակեց,
Իսկ պանիրը ներքև ընկավ…
Աղվեսն ասավ. -Հերի՛ք եղավ,

Կտրի՛ր տհաճ կռկռոցդ
Ու մի՛ գցիր գոռգոռոցդ,
Դու սոխակ չես, այլ՝ լոկ ագռավ,
Կռնչոցդ գլուխ տարավ:

08.05.11.

Աղվեսն ու այծը

Փորձված աղվեսը
Ջրհորը ընկավ,
Ինչքան էլ տանջվեց,
Ելքը չգտավ:
Երկար ժամանակ
Նստելով հորում՝
Անճարությունից
Գլուխն էր քորում,
Անվերջ մտորում…
Ու մեկ էլ հանկարծ
Մի այծ մկկաց:
Շեկլիկը ցնծաց.
«Օ՜, կարծես Աստված
Աղերսս լսեց,
Ցանցառ մորուքին
Իմ կողմը ղրկեց»:
Այծը հարցրեց.
-Հե՜յ, աղվե՛ս քույրիկ,
Մեն-մենակ նստած
Էդ ի՞նչ ես անում,
Ի՞նչ է, դու ջրից
Հեչ չե՞ս կշտանում:
-Չէ՛, չեմ կշտանում,
Ինչքան էլ խմում,
Սառնորակ ջրից
Ես չեմ հագենում.
Շատ քաղցրահամ է,
Օ՜, իսկը շարբաթ,

Երևի էստեղ
Նստեմ մի շաբաթ:
Դու էլ կլինես
Շոգից ծարաված,
Դե՛, ինձ մոտ արի,
Արագ իջիր ցած:
Պառաված այծը
Կուլ տվեց խայծը.
Հենց որ սուտլիկի
Գովեստը լսեց,
Խելքը թռցրեց,
Իջավ ջրհորը,
Ջուրն ածեց փորը,
Լիացավ, տռզեց:
-Բայց, ա՜յ քեզ փորձանք,
Հիմա ո՞նց դուրս գանք:
Իսկ աղվեսն էլ՝ թե.
-Մեջք մեջքի որ տանք,
Սարեր շուռ կտանք,
Ես վաղուց գիտեմ
Ընտիր հնարանք:
Արի՛, թիկունքդ
Հենիր էս պատին,
Որ ոտս դնեմ
Քո լայն ճակատին,
Ու ինձ էլ օգնիր՝
Հորիցը դուրս գամ,
Հետո էլ ես քեզ
Օգնության կգամ:
Խարդախը այս կերպ
Ջրհորից ելավ,

Կայտառ ու զվարթ
Ճանապարհի ընկավ:
-Կա՛ց, ա՛յ անիրավ,
Էդ ո՞ւր ես գնում,
Դու մեր պայմանը
Ինչո՞ւ ես խախտում,
Օգնի՛ր, որ ես էլ
Էստեղից դուրս գամ:
Խորամանկն ասաց.
-Է՜յ դու, անզգա՛մ,
Ուղեղդ ո՞ւր էր,
Երբ ներքև իջար,
Դե՛, հիմա էլ դու
Արա գլխիդ ճար…
04.05.11.

Մեծամիտ կանթեղը

Մութ էր: Մարդը լամպը վառեց,
Ողջ խրճիթը լուսավորվեց:
Լույսը հանկարծ պայծառացավ,
Իսկ կանթեղը գոռոզացավ,
Ինքն իրենով շատ զմայլվեց,
Հպարտորեն հայտարարեց.
-Լույս եմ տալիս բոլորից վառ,
Չկա ինձնից զորեղ, պայծառ,
Լուսավոր եմ ես լուսնյակից,
Առավել եմ արեգակից,
Լուսատու եմ ես անսպառ,
Չկա ոչ ոք ինձ հավասար:
Ե՜ս... ե՜ս... ե՜ս... ե՜ս...
Մեկ էլ անտես
Մեղմիկ սյուքը տարուբերեց
Ու ճրագի լույսը մարեց:
Մեծամիտը իսկույնևեթ
Ձայնը կտրեց, քիթը կախեց...
Մարդը կրկին լամպը վառեց,
Սնապարծին լավ նախատեց.
-Ո՞վ է տեսել, որ կանթեղը
Իր գովքն անի, գլուխ գովի,
Արեգակին, լուսնյակին էլ
Դեռ փնովի:
Ով լինելդ
Դու երբևէ մի՛ մոռացիր
Ու խոսքերիդ,

Աստծներիդ
Չափն իմացիր:
04.08.08.



Առյուծը, աղվեսն ու էշը

Ծեր առյուծը տկարացավ,
Մեջքի ցավը շատ սաստկացավ,
Ձեռ ու ոտից ընկավ իսպառ,
Իսկ աղվեսը գլխապատառ,
Շտապ եկավ հիվանդատես…
-Բարո՜վ եկար, քավո՛ր աղվես:
-Հազա՜ր բարի, իմ հարգելի,
Հենց լուրն առա սարսափելի,
Մոտդ եկա, մի ճար անեմ,
Քեզ դարմանեմ, ոտքի հանեմ:
-Թե ուզում ես, որ ողջ մնամ,
Էն աշխարհը ես չգնամ,
Ավանակին շուտ մոտս բեր,
Թե չես ուզում մնալ անտեր:
Միրտս նրա միսն է ուզում,
Դա է միակ բուժիչ դեղը,
Երբ որ էշին փորս քաշեմ,
Կապաքինվեմ տեղնուտեղը:
-Ապրա՛ծ կենաս, հզո՛ր արքա,
Քեզանից թանկ ոչ ոք չկա,
Ինչ ուզեցիր, ես կճարեմ,
Թեկուզ կյանքովս վճարեմ:
Խորամանկը զոհին գտավ,
Գլուխ տվեց, խելքը մտավ.
-Հե՜յ, աչքդ լույս, իշո՛ւկ քեռի,
Որքա՜ն շատ ես դու բախտավոր,
Արքան շուտով պիտի մեռնի,
Քեզ է ընտրել նա թագավոր:

Ասում է, որ չկա ոչ ոք
Քեզնից խելոք ու առավել,
Ազնիվ, զորեղ, արդարադատ,
Միայն քեզ է խիստ հավանել:
Դու՝ խելքի ծով, մեր աչքի լույս,
Միակն ես դու, անտարակույս,
Առաքինի ու ողջամիտ,
Պարկեշտ, բարի, արդարամիտ:
Դե՛, գլուխդ էլ չտանեմ,
Արի՛, նրա կուշտը տանեմ,
Մահից առաջ թող քեզ օրհնի
Եվ սուրբ աջը գլխիդ դնի:
Պարզամիտը գովեստներից
Քաջալերվեց, թևեր առավ,
Իր էշ խելքից, ցավոք սրտի,
Նենգ աղվեսի ծուղակն ընկավ:
Երբ առյուծը զոհին տեսավ,
Ձիամբերեց, վրա հասավ,
Սակայն էշը լեղապատառ,
Թե ոնց եղավ, մահից պրծավ,
Նույն րոպեին փախավ անտառ…
Խորամանկի չարչարանքը,
Ողջ տանջանքը ջուրը լցվեց,
Իսկ հիվանդը նորից պնդեց,
Որ իշուկին մոտը բերի…
-Դե՛, մի քիչ էլ դու համբերի,
Դժվար գործ է, մե՛ծն արքա,
Բայց, ճա՞րս ինչ, այլ ելք չկա:
Նա վերստին անտառ մտավ,
Փառամոլին հազիվ գտավ,
Կրկին երգեց իր հին երգը,

Վերսկսեց կեղծ գովերգը,
Ստի տոպրակն էլի բացեց
Ու պոչավոր ստեր ասեց:
Ավանակը վիրավորված՝
Սուտասանին կտրուկ ասաց.
-Դու այլևս ինձ չես խաբի,
Իմ աչքերը էլ չես կապի,
Մեկ ուրիշին հիմարացրու,
Գովաբանիր, արքա դարձրու:
-Ի՜նչ վախլուկ ես, ի՜նչ փոքրոգի,
Եղի՛ր դույզն-ինչ մեծահոգի,
Մահամերձը հենց քեզ տեսավ,
Առույգացավ, տեղից ելավ,
Որ համբուրի իր ընտրյալին,
Հապճեպ օրհնի, դնի գահին,
Իսկ դո՛ւ, անխե՛լք,
Քո շահն անգամ չհասկացար,
Երախտամոռ անպետքի պես
Թագը թողիր ու հեռացար:
Աչքակապը խորամանկեց,
Քամի արեց, լեզու թափեց,
Այդ փառասեր չորքոտանու
Խելքը կերավ, դարձյալ խաբեց,
Ձեռաց նրան առաջն արավ,
Վատառողջի մոտը տարավ:
Ու այս անգամ անգութ արքան
Խելագուրկի վերջը տվեց,
Ագահորեն նրան խժռեց,
Խարդախին էլ բան չտվեց:
Էշի գանգը երբ որ պոկվեց,
Ծեր աղվեսի մոտ գլորվեց,

Խորամանկը ծուծը առավ,
Գաղտագողի ինքը կերավ՝
Ի հատուցում իր ջանքերի,
Այդքան կրած տանջանքների:
Արյունարբուն գանգը տեսավ,
Անկուշտի պես վրա հասավ,
Դես պտտեց, դեն պտտեց,
Ապուշ կտրած շուրջը զննեց:
-Բա որտե՞ղ է էդ ուղեղը,-
Հարցրեց նա տեղնուտեղը:
Աղվեսն էլ՝ թե.
-Առյո՛ւծ արքա, խաչը վկա,
Ավանակը ուղեղ չունի,
Զուր մի՛ փնտրի,
Միևնույն է, դու չես գտնի:
Եթե ուղեղ նա ունենար,
Մի՞թե նորից քեզ մոտ կգար…
07.05.11.

Մեծամիտ էշը

Օրերից մի օր
Էշը գլխիկոր,
Աստծո արձանը
Իր մեջքին դրած,
Դանդաղկոտ, կամաց
Գնում էր քաղաք:
Իսկ ճանապարհի
Ամեն մի քայլին
Ով հանդիպում էր,
Խոր ակնածանքով
Երկրպագում էր
Տիրոջ ոսկեձույլ
Ու մեծ արձանին:
Երկարականջը
Շատ ոգևորվեց.
Սխալմամբ կարծեց,
Թե ամենքն իրեն
Չափազանց հարգում,
Սիրում են, պատվում,
Գլուխ են տալիս,
Ծնկի են գալիս:
Այդ մեծամիտը
Իր դունչը տնկեց,
Քիթը վեր ցցեց
Ու ճամփի կեսին
Կանգնեց, միտք արեց.
-Ինչպե՞ս թե, մարդիկ
Ինձ հարգեն, պատվեն,

Գետին խոնարհվեն,
Լուռ երկրպագեն,
Իսկ ես բե՞ռ կրեմ…
Ծեր իշապանը
Հենց գլխի ընկավ,
Թե ինչու էշը
Հանկարծ կանգ առավ,
Ճիպոտը վերցրեց,
Տարավ ու բերեց,
Հիմար իշուկին
Մի լավ տուր տվեց:
-Ա՛յ երկարականջ,
Տխմա՛ր ավանակ,
Տո հաստագլո՛ւխ,
Տո էշի՛ քուռակ,
Խելքդ գլուխդ
Իսկույն հավաքիր,
Մի՞թե մարդն էշին
Կերկրպագի:

01.08.08.

Ագահ մրջյունը

Ասում են, թե ժիր մրջյունը
Մի ժամանակ մարդ է եղել,
Աշխատել է նա օրնիբուն,
Չարչարանքով հողը հերկել,
Մշակել է անդաստանը,
Բերքը լցրել շտեմարանը:
Ու թեպետև ամբարները
Լի են եղել բարիքներով,
Չի գոհացել իր տքնաջան
Աշխատանքի պտուղներով:
Ցանկացել է է՛լ ավելին,
Թալանել է ուրիշներին,
Այլոց բերքը ծածուկ կրել
Եվ ցորենի, հատիկների
Պաշարներն է համալրել:
Աստված վերից երբ տեսել է,
Այդ ամենից զայրացել է,
Մարդու տեսքից նրան զրկել
Ու մրջյունի ձև է տվել:
Այլ կերպար է նա ստացել,
Միջատների շարքը անցել,
Բայց չի փոխել գող բնույթը,
Չի մոռացել սովորույթը.
Ձեռքը ընկած գարի, ցորեն
Բույնն է կրում ագահորեն:

30.04.11.

Կրիան ու արծիվը

Կրիան մի օր երկինք նայեց,
Արծվի ճախրով շատ հմայվեց
Ու միտք արեց. «Ա՜խ, երանի՜
Ես էլ թռչել կարենայի»:
Զորեղ թռչնին հույժ նախանձեց,
Արցունք թափեց ու թախանձեց,
Որ վերջինս հնար անի,
Իրեն թռչել ուսուցանի:
Սրատեսը խիստ շվարեց,
Դանդաղկոտին հարցում արեց.
-Ինչպե՞ս պիտի երկինք թռչես,
Երբ սողուն ես, թևեր չունես:
Ո՞վ է տեսել թռչող կրիա,
Անխելք ես դու, Աստված վկա:
Բայց դե խևին խրատը՝ ինչ,
Դատարկ խոսք է, ուրիշ՝ ոչինչ:
Արծիվը էլ չհամառեց,
Խելագարին վերև հանեց,
Իսկ բարձունքից երբ բաց թողեց,
Խենթուկն ընկավ, շունչը փչեց:

06.06.02.

Անխելք լուսինը

Լուսնյակը հմուտ
Դերձակին խնդրեց,
Որ իրեն համար
Մի զգեստ կարի,
Այն լինի հարմար,
Նախշուն կտորից,
Վրան էլ փայլուն
Կոճակներ շարի:
Ու թե պատվերը
Նա բավարարի,
Երդվեց, որ հաստատ
Լավ կվճարի:
Վարպետը լուսնի
Խնդիրքը լսեց,
Փոքր-ինչ մտածեց,
Պատասխան տվեց.
-Ա՛յ խելապակաս,
Խելքի՛ց պատուհաս,
Մի օր դու գեր ես,
Մի օր էլ՝ նվազ,
Անմիտ պահանջդ
Ո՞նց բավարարեմ,
Քո հագով ինչպե՞ս
Ես հագուստ կարեմ:
01.05.11.

Ծերունին և մահը

Աղքատ ծերունին
Ցախը հավաքած,
Շալակը առած,
Սաստիկ կորացած,
Բեռիցը կքված,
Դանդաղկոտ, կամաց
Լեռան բարձունքից
Իջնում էր հոգնած:
Ուժերը հատած՝
Ծերուկը նստեց,
Աշխարհի մասին
Տխուր մտորեց.
-Ես շատ եմ հոգնել
Էս շան տանջանքից,
Էս անտանելի,
Գարշելի կյանքից,
Որտե՞ղ է մահը,
Թող գա ու տանի,
Ծանր բեռից էլ
Ընդմիշտ ազատի:
Դեռ չէր ավարտել
Խոսքը ծերունին,
Մեկ էլ թիկնոցով,
Գերանդին ուսին,
Սև կերպարանքով՝
Հույժ սարսափազդու,
Հայտնվեց մահը՝
Ահեղ, ահարկու:

-Կանչեցի՞ր դու ինձ,
Եկել եմ ահա,
Ես քեզ լսեցի,
Շուտ մոտդ եկա,
Որ հոգիդ առնեմ
Եվ հետս տանեմ,
Ցավից, տանջանքից
Իսպառ ազատեմ:
Ալևորն իսկույն
Վախից քար կտրեց,
Թուքը չորացավ,
Գույնը խիստ գցեց,
Լեզուն բերանում
Մի կերպ պտտեց
Ու կմկմալով
Պատասխան տվեց.
-Խոսքերս բնավ
Ճիշտ չես հասկացել,
Ո՞վ է էս կյանքից
Հոգնել, ձանձրացել,
Կանչել եմ ես քեզ,
Որ գաս, ինձ օգնես,
Ցախով լի պարկը
Շալակս դնես:
28.07.08.

Իշուկն ու գայլը

Էշը դաշտում հանգիստ կանգնած
Արածում էր, մեկ էլ հանկարծ
Ծերուկ գայլը սաստիկ քաղցած
Եկավ-կանգնեց նրա դիմաց:
Իշուկն իրեն չկորցրեց,
Կաղ ձևացավ,
Իր էշ հալով ախոյանին
Հիմարացրեց, զվարթ ասավ.
-Բարո՜վ ես դու էստեղ եկել,
Աստված է քեզ մոտս դրկել,
Գիտե՞ս՝ ոտս փուշ է մտել,
Թե ուզում ես դու ինձ ուտել,
Էդ անպետքին հանի՛ր, նոր կեր,
Ա՛յ գայլ ախպեր:
Աղաչում եմ, շուտ դարմանիր,
Մի ճար արա, արագ հանիր,
Եթե ուտես հանկարծակի,
Տե՛ս, տատասկը քեզ չծակի:
Էշը նրան այսպես ծաղրեց,
Ոտքը հապճեպ վերև ցցեց,
Որ սմբակի փուշը հանի,
Իսկ երբ գայլը ուզեց զննի,
Ամբողջ ուժով նա հարվածեց,
Անուղեղի ատամները
Տեղնուտեղը փորը ածեց:
Գիշատիչը ցավից ոռնաց,
Տնքտնքալով հազիվ ասաց.
-Ո՞վ է տեսել, որ ի ծնե

Մսագործը բժիշկ դառնա,
Տե՛ղն է ինձ, հա՛…
05.08.08.

Անբախտ ավանակը

Այգեպանը էշ էր պահում,
Անչափ բեռնում ու չարչարում.
Խեղճ իշուկը շատ աշխատում,
Քիչ ուտում էր, շուտ հոգնում էր,
Ձեռքից-ոտքից էլ ընկնում էր:
Հանգիստ չուներ աշխատանքից,
Դժգոհ էր իր չարքաշ կյանքից:
Այդ տանջանքին չդիմացավ,
Երկնավորին գանգատ արավ,
Բախտն անիծեց, արցունք թափեց,
Ոտքերն ընկավ ու պաղատեց,
Նոր տեր խնդրեց:
Աստված խղճաց և իշուկին
Կավագործի մոտ ուղարկեց,
Սակայն այնտեղ տարաբախտը
Ավելի վատ վիճակում էր.
Առավոտից մինչ իրիկուն
Քուն ու դադար բնավ չուներ,
Գիշեր ու զօր նա բանում էր,
Սոված-ծարավ, հալից ընկած,
Գլուխը կախ ծառայում էր:
Բրուտից էլ գոհ չմնաց,
Կրկին Աստծո դուռը գնաց:
Արարիչը շատ մտածեց
Եվ այս անգամ ավանակին
Կաշեգործի մոտ ուղարկեց:
Ձորքոտանին երբ որ տեսավ՝
Արհեստավորն ինչ է անում,

Ինչպես է նա հեգ կենդանու
Կաշին մաշկում ու տիկ հանում,
Գլխի ընկավ,
Թե իր վերջը ինչ կլինի,
Որ ինքն էլ է կանգնած հերթի,
Եվ վաղ թե ուշ կաշեգործը
Իր կաշին էլ պիտի քերթի:
Բայց դե, ցավոք, ուշ հասկացավ,
Իրեն վրա խիստ բարկացավ,
Դատարկ գլխին նա վայ տվեց,
Աղիողորմ լացուկոծեց:
Ահա թե ինչ ուսուցանեց
Սույն առակը,
Թե տերերից չդժգոհեր ավանակը,
Ունեցածով լուռ գոհանար,
Չար բախտի դեմ չընդոստանար,
Այս վախճանին միգուցե և
Երբևիցե չարժանանար:
31.07.08.

Կուրամուկը

Լույսից հեռու՝ գետնի տակին,
Բնակվում է ամբողջ տարին
Միջատակեր մի կաթնասուն,
Որին խլուրդ կամ էլ այլ կերպ
Գետնամուկ են մարդիկ ասում:
Այդ խլմուկը՝ կուրամուկը,
Իրականում կուրաչք մուկ է
Եվ ինչքան էլ լինի հմուտ,
Չի տարբերում ո՛չ լույս, ո՛չ մութ,
Ո՛չ փայտ, ո՛չ հաց,
Բայց նա մի օր մորը ասաց.
- Գիտե՞ս, մայրի՛կ, որ քո բալիկն
Սկսել է արդեն տեսնել
Ու տարբերել կավը քարից,
Խոտը՝ ծառից, լավը՝ վատից:
Մայր խլուրդը շատ զարմացավ
Եվ որպեսզի ձագին փորձի,
Խնկի հատիկ տվեց, ասավ.
-Թե տեսնում ես, ասա՝ ինչ է:
Ձագուկն էլ՝ թե.
-Հաստատ խիճ է:
-Վա՛յ իմ գլխին,
Իմ խեղճ որդին
Բուրումնավետ խունկը
Խճից չի տարբերում:
Կասկած չկա, նա ոչ միայն
Այն չի տեսնում, այլ կարծես թե
Հոտառությունն է կորցնում:
02.08.08.

Էշն ու առյուծը

Էշն ու առյուծը
Օրերից մի օր
Բարեկամացան,
Եղբայրներ դարձան:
Դաշինք կնքեցին,
Խոստում տվեցին
Մեկմեկու օգնել,
Դժվար պահերին,
Տխուր օրերին
Իրար սատարել:
Ախպեր տղերքը
Առավոտ կանուխ
Գնացին որսի
Ու ճամփի կեսին
Տեսան մեծ քարայր՝
Այծիկներով լի:
Եվ որոշեցին՝
Երկարականջը
Անձավը մտնի,
Մի հնար գտնի,
Նրանց դուրս անի,
Արքան էլ բռնի,
Պոզերից քաշի,
Կացարան տանի:
Ոնց մտածեցին,
Այդպես արեցին:
Առյուծը կանգնեց
Այրի մուտքի մոտ,

Իսկ ավանակը՝
Անվախ ու սրտոտ,
Քարայր խցկվեց,
Էշի զռոցով,
Ծափ ու գոռոցով,
Հարայ-հրոցով
Նրանց վախեցրեց:
Վայրի այծերը
Իշային տեսքից,
Հանած ձայներից
Ահաբեկվեցին,
Վախը սրտերում,
Պատի ծեփ դառած՝
Ահով ու դողով
Ելքը փնտրեցին:
Խելառ իշուկը
Իր հնարանքից
Թունդ ոգևորվեց,
Ինքն իրենից գոհ,
Գլուխ գովելով՝
Պարծանքով խոսեց.
-Լա՛վ վախեցրի, չէ՞,
Վայրի այծերին,
Դարձրի նրանց
Հիմա մեր գերին
Եվ գործն էլ արի
Կարծես անթերի:
Իսկ թագավորը
Բեղի տակ ժպտաց,
Ծաղրելով ասաց.
-Ախպե՛ր ավանակ,

Ճիշտը որ ասեմ,
Քո ով լինելը
Թե չիմանայի,
Էդ զոզոցից,
Հարայ-հրոցից,
Ես էլ անկասկած
Կվախենայի…

04.05.11.

Աստղագուշակը

Աստղագուշակը
Ամեն իրիկուն
Տնից դուրս գալով՝
Երկինք էր նայում,
Աստղերն էր համրում,
Հաշվարկներ անում:
Մի երեկո էլ
Մտքերով տարված,
Աչքերը հեռու
Աստղերին հառած՝
Քայլերը ուղղեց
Դեպի ջրհորը,
Բայց, ցավոք սրտի,
Երկու քայլ չարած՝
Ընկավ խոր հորը:
Մի անցորդ տեսավ,
Հեգնանքով ասավ.
-Ողորմի հորդ,
Ա՛յ դու խելացի,
Առաջդ նայի՛ր,
Նոր ճամփադ անցիր:
Ուզում ես տեսնել՝
Ինչ կա երկնքում,
Մինչդեռ առջևդ
Անգամ չես տեսնում…
28.07.08.

Աքաղաղն ու գողը

Գողը գյուղում մի տուն մտավ,
Շատ փորփրեց, բան չգտավ,
Բակում տեսավ գոռոզ-մոռոզ
Ման էր գալիս չաղլիկ խորոզ:
Դես-դեն նայեց, մարդ չտեսավ,
Ճանկեց նրան, առավ-թռավ:
Խեղճ աքլորի սիրտը ճաքեց,
Գույնը գցեց, լեղին պատռեց,
Անմիջապես նա հասկացավ,
Որ իր վերջը արդեն հասավ:
Կամաց-կամաց երբ սիրտ առավ,
Աղաչելով գողին ասավ.
-Խնդրում եմ քեզ, ինձ խնայիր,
Քաղցր աչքով դու ինձ նայիր,
Թե քեզ համար ես անպետք եմ,
Բայց բոլորին հո շատ պետք եմ.
Առավոտ վաղ զիլ կանչում եմ,
Մարդկանց քնից արթնացնում եմ,
Որ չուշանան բան ու գործից,
Աշխատանքից կամ դպրոցից:
Ավազակը քմծիծաղեց,
Աքաղաղին պատասխանեց.
-Կարծում ես՝ մե՞ծ բան ես անում,
Ողջ ավանը ոտքի հանում
Ու չես թողնում, որ գողանամ,
Գաղտագողի լուռ հեռանամ:
Ա՛յ դու անխելք, անմի՛տ, անպե՛տք,
Քեզ անհապաղ ուտել է պետք:

Այս որ լսեց, հեգ աքլորը
Խիստ մոլորեց,
Թալանչին էլ տեղնուտեղը
Նրա վիզը շուտ ոլորեց:
01.08.08.

Անճոռնի ճայակը

Առյուծ արքան՝ գերիզորը,
Գազանների թագավորը,
Որոշեց, որ թռչուններին
Իր մոտ բերի,
Մեկիկ-մեկիկ մի լավ տնտղի
Ու հավքերի արքա ընտրի:
Դրա մասին հայտարարեց,
Ամենքին էլ տեղյակ պահեց՝
Շաբաթ օրը խումբ-խմբովին
Ներկայանան մեծ ժողովին:
Էս որ լսեց գեշ ճայակը՝
Սևուկ-մևուկ այլանդակը,
Իրար խառնեց ազգուտակը,
Ընկավ նրանց դուռն ու բակը:
Սրա-նրա մոտը գնաց,
Վիզը ծռեց, փետուր մուրաց,
Թռչուններն էլ չմերժեցին,
Մի-մի բմբուլ նվիրեցին:
Նշված օրը, ժամը վեցին,
Առյուծի շուրջ հավաքվեցին
Միրամարգը և ագռավը,
Արծիվն, անգղն ու կաքավը,
Բազեն, թութակն ու սոխակը,
Արագիլը, ծիծեռնակը…
Չկար միայն սև ճայակը՝
Էն անճոռնին, անճարակը:
Մի կես ժամից երբ ժամանեց,
Ներկաներին խիստ զարմացրեց.
Վրան փետուր շարած պես-պես՝

Դարձել էր նա գեղեցկատես,
Զուգս ընդունել և զարդարվել,
Տոնածառի պես էր դառել:
Հպարտ-հպարտ, քիթը ցցած,
Իր տեսքից գոհ ու հմայված,
Օրորալով, շորորալով,
Նազ անելով, կոտրատվելով՝
Արջնագռավը ծանր ու մեծ
Եկավ, նրանց առջև տնկվեց:
Գահակալը ոտքից գլուխ
Կարգին տնտղեց ու հենց նրան
Թռչունների արքա ընտրեց:
Իսկ հավքերը հույժ զայրացան
Ու խմբովին վրա հասան,
Դես քաշեցին, դեն քաշեցին,
Իրենց տված բմբուլները
Պոկոտեցին, դեն նետեցին:
Եվ նա դարձավ էլի էն նույն,
Սովորական գեշ ճայակը,
Նույն գարշելին, այլանդակը,
Սակայն հիմա է՛լ ավելի
Այլանդակվեց, գզգզորվեց,
Փետրահանվեց, Աստված գիտի,
Թե ինչ թռչնի նա նմանվեց…
Առյուծ արքան միտքը փոխեց
Ու անճոռնուն գահից զրկեց:
02.08.08.



Մոծակն ու առյուծը

Մոծակն եկավ առյուծի մոտ
Ու հոխորտաց.
-Ա՛յ պարծենկոտ,
Չեմ վախենում ես քեզանից,
Զորավոր չես դու ինձանից,
Կնոջ պես ես կռիվ անում,
Սուր ճանկերով աչքեր հանում,
Կծոտում ես ժանիքներով,
Ճանկռտում ես ճիրաններով,
Անգթորեն պատառոտում,
Անմեղ զոհին զուր հոշոտում:
Վայել չէ դա արքաներին,
Բնորոշ է հեգ թույլերին,
Թե ուզում ես, արի մրցենք,
Մեր ուժերը հիմա փորձենք:
Այսպես ասավ,
Վրա հասավ,
Տզտզացրեց,
Բզբզացրեց,
Բաշի շուրջը
Պտույտ գործեց,
Մտավ աչքը, խայթեց ունչը,
Ասեղի պես խրվեց դունչը,
Հենց նույն պահին
Լսվեց ուժգին
Թագավորի սուր մռունչը:
Մոծակն իրեն փառաբանեց,
Մեծարելով երկինք հանեց,

Խոսքեր ասաց դրվատանքի,
Շեփոր փչեց հաղթանակի:
Բայց կարճ տևեց սեգ պարծանքը,
Գլխին եկավ մեծ փորձանքը.
Հանկարծ ընկավ ցանց-թակարդը,
Որ հյուսել էր վարպետ սարդը,
Ոստայնի մեջ նա խճճվեց,
Իսկ մամուկը վերջը տվեց:
Հզորի դեմ իրեն տարած
Հաղթությունով հպարտացավ,
Դժբախտաբար այդ չարամիտ,
Նենգ միջատի զոհը դարձավ:
01.05.11.

Մկնիկները

Դաշտամուկը և գորշ մուկը
Ընկերացան, քույրեր դարձան:
Եկավ գարուն…
Դաշտամուկը ընկերուհուն
Իր տուն կանչեց,
Ցեխակոլոլ արմտիքով,
Հատիկներով ու խոտերով
Սեղան բացեց:
Գորշ մկնիկը այս ամենին
Հենց որ նայեց, սիրտը խառնեց.
-Փի՜ֆ, էս ի՞նչ է, քո հյուրերին
Էսպե՞ս ես միշտ հյուրասիրում:
-Ինչ որ ունեմ, էն եմ բերում:
-Ես էսպիսի կեղտոտ-մեղտոտ,
Հոտած-փտած բան չեմ ուտում:
Թե չգիտես, ասեմ ես քեզ,
Ապրում եմ ես աղայի պես,
Տանս ունեմ, ինչ որ ուզես,
Եթե հյուր գաս, կհամոզվես:
Երկու օր անց դաշտամուկը
Ընկերուհուն այցի գնաց,
Հյուրընկալը նրա առաջ
Բերեց-դրեց խնձոր ու տանձ,
Չիր ու չամիչ, ընկույզ, աղանձ,
Պնդուկ, կաղին, փշատ ու նուշ,
Է՛լ գետնանուշ՝ անուշ-անուշ,
Արմավ, կարագ, պանիր ու սեր…
-Դե՛, թանկագի՛ն, ինչ կուզես, կեր,
Մի լավ սնվի՛ր, մի՛ ամաչիր:

Մեկ էլ հանկարծ դուռը ճռռաց,
Մկան խոսքը կիսատ մնաց,
Մեկը մառան եկավ-գնաց,
Առավ-տարավ պանիր ու հաց:
Վախկոտ հյուրը սա որ տեսավ,
Թուքը սառավ, շատ վախեցավ:
Քիչ որ անցավ, նա սիրտ առավ
Եվ հենց ուզեց փորը լցնել
Ընկույզ, աղանձ, կարագ ու սեր,
Մեկ էլ, ըհը՛, դուռը անտեր
Կրկին բացվեց… Մուկը վախից
Գույնը գցեց, պատին գամվեց,
Դես-դեն նայեց, մի ծակ գտավ,
Արագորեն մեջը մտավ:
Տանտիրուհին երբ որ գնաց,
Դաշտամուկը թեև սոված՝
Ընկերուհուն այսպես ասաց.
-Մնաս բարով, իմ սիրելի,
Էս ամենը թող քեզ լինի.
Ինչի՞ս են պետք լիությունը
Եվ ճոխ կյանքը,
Թե որ գլխիս կախված լինի
Միշտ վտանգը: Լավ է՝ ես իմ
Արմտիքն ու հատիկն ուտեմ,
Բայց անվտանգ և ապահով
Կյանքով ապրեմ:

05.08.08.

Որսորդները

Ավանակը, ծեր աղվեսը,
Առյուծ արքան ընկերացան:
Որոշեցին՝ որսի գնան,
Ձեռք բերածը իրար միջև
Անեն բաժան:
Դես վազեցին, դեն վազեցին,
Սարեր-ձորեր թափառեցին,
Չարչարվեցին ու տանջվեցին,
Մինչև գործը ավարտեցին:
Երբ տուն հասան,
Թագավորը թաթով հրեց,
Որսը էշի առջև դրեց,
Որ վերջինս այն բաժանի,
Ամենքին էլ բաժին հանի:
Իսկ իշուկը եղբայրաբար,
Շատ անաչառ ու շատ արդար
Իրենց միջև ազնիվ բաշխեց,
Համեստորեն մի կողմ քաշվեց:
-Մե՛ծն արքա, Աստված վկա,
Ազնվաբար և հավասար
Ամբողջն արի ես մասնեմաս,
Ընտրի՛ր, որը կկամենաս:
Արյունարբուն շուրջը նայեց,
Պատառները համեմատեց,
Քիթ ու մռութն իրար խառնեց,
Անուղեղին տեղում խժռեց:
Քիչ որ անցավ,
Շեկ աղվեսին առյուծն ասավ.

-Հիմա էլ քո հերթը հասավ,
Ա՛յ խորամանկ, լա՛վ մտածիր
Եվ ավարը ճի՛շտ մասնատիր:
Ծեր խարդախը դույզն-ինչ խորհեց,
Որսածն իրար վրա կիտեց,
Փոքրիկ կտոր առանձնացրեց,
Առաջնորդին ներկայացրեց.
-Զորե՛ղ արքա, ահա այսպես,
Քիչ մասը՝ ինձ, շատ մասը՝ քեզ:
-Աղվե՛ս ախպեր, ինձ դուր եկար,
Դու այդ ինչպե՞ս գլխի ընկար,
Թե ոնց պիտի կերը բաշխես,
Որ քմահաճ սիրտս շահես:
Շեկլիկն ասավ.
-Նահատակյալ ավանակը
Ինձ դաս եղավ,
Ու հասկացա, թե որ ես էլ
Այն բաժանեմ էշավարի,
Առյուծ արքան ինձ չի ների:

09.08.08.

Ժլատ մեղուները

Ծաղկից ծաղիկ թռչկոտելով,
Անուշ նեկտար ժողովելով՝
Կայտառ ու ժիր միջատները՝
Մեղուները խմբակային
Դժվարությամբ արարեցին
Համեղ մեղրն աստվածային:
Մարդիկ երբ որ համտեսեցին,
Մեծ հաճույքով վայելեցին,
Բուրումնալից և օգտակար
Հրաշք-մեղրը գովերգեցին:
Մեղուները աշխատասեր
Ժլատ էին ու ընչասեր,
Ուստի Զևսին ողոքեցին,
Տրտնջացին, բողոքեցին.
-Տե՛ր, ուժ տուր մեզ, հզորություն
Կամ խայթելու մի զորություն,
Գոնե այդպես մարդկանց վանենք,
Որ խորիսխը էլ չտանեն,
Թող մեզ մնա լրիվ բերքը,
Աստվածային սուրբ մթերքը:
-Ինչպես կուզեք, ձերն է կամքը,
Ես չեմ մերժի այդ խնդրանքը,
Բայց լավ հիշեք, հենց որ խայթեք,
Կկործանեք ձեր իսկ կյանքը՝
Ի հատուցում ագահության,
Չկամության և չարության:
Ասում են, թե այսուհետև
Մեղուները երբ խայթում են

Ու կորցնում ասեղ-խայթը,
Ընկնում են միշտ
Իրենց լարած որոգայթը.
Պահպանելով գանձը անգին՝
Հրաժեշտ են տալիս կյանքին:

25.01.12.

Պոչատ աղվեսը

Շեկլիկ-մեկլիկ աղվեսը
Մի օր երբ որս էր անում,
Թե ոնց եղավ, չգիտեմ,
Պոչը թողեց թակարդում:
Լաց-կոծ արավ, մղկտաց,
Հուսակտուր տուն գնաց
Ու միտք արեց. «Ի՞նչ անեմ,
Էսպես պոչատ ո՞նց ապրեմ,
Առանց ագի որ տեսնեն,
Կծիծաղեն, կծաղրեն»:
Գլուխ կոտրեց, չարչարվեց,
Վերջը մի բան հնարեց,
Իսկույն ժողով գումարեց,
Աղվեսներին հավաքեց,
Իրեն լրջմիտ տեսք տալով՝
Իմաստալից ճառ ասեց.
-Իմ քույրիկնե՛ր, եղբայրնե՛ր,
Իմ թանկագի՛ն ժողովուրդ,
Ձեզ կանչել եմ, ժողովել,
Որպեսզի տամ մի խորհուրդ:
Եկե՛ք, ականջ դրեք ինձ,
Հրաժարվեք պոչերից,
Քոքից կտրեք, դեն նետեք,
Ծանրությունից ազատվեք:
Ո՞ւմ են դրանք զարդարել,
Իզուր տեղը բեռ դառել,
Կախ են ընկել մեզանից,
Ո՛չ ձեզ են պետք, ո՛չ էլ՝ ինձ:

Երբ ելույթը ավարտեց,
Հեռու քաշվեց ու կանգնեց,
Առաջ եկավ մի աղվես
Եվ սկսեց խոսքն այսպես.
-Ա՛յ խորամանկ, աներե՛ս,
Հերի՛ք լեզու դու թափես,
Քաղցր-մեղցր ճառ ասես,
Քո կարճ խելքով մեզ խաբես:
Փորացավդ իմացանք,
Միտքդ շատ լավ հասկացանք,
Մի՞թե այնքան հիմար ենք,
Որ հորդորիդ հետևենք:

28.07.08.

Պարծենկոտ ջորին

Փոքրիկ ջորին
Կերավ գարին,
Թափ հավաքեց,
Գոտեպնդվեց,
Քամու նման
Նա սլացավ,
Արագ վազքով
Հպարտացավ:
Քիթը մեկեն
Վերև ցցեց,
Պարծենալով
Բացականչեց.
-Իմ ծագումը
Ինձ հայտնի է,
Հաստատ գիտեմ՝
Մայրս ձի է,
Դրա համար
Ահա էսպես
Վարգում եմ ես
Ձիուկի պես:
Բայց քիչ հետո
Ձայնը կտրեց,
Երբ էշ հորը
Մտաբերեց:
Ու հասկացավ,
Որ ինչքան էլ
Գլուխ գովի,
Հպարտանա,

Խառնիխուռն
Իր սերումը,
Մութ անցյալը
Չի մոռանա:

01.05.11.

Արևն ու քամին

Արևն ու քամին
Մի օր վիճեցին,
Թե ով է հզոր
Ու ամենազոր:
Եվ որոշեցին,
Պայման կապեցին՝
Ով մարդու հագից
Հագուստը հանի,
Գրազը, հարկավ,
Նա էլ կտանի:
Քամին զայրացավ,
Փոթորիկ դարձավ,
Այնպես փրփրեց,
Այնպես կատաղեց,
Թփերն ու ծառերն
Արմատից հանեց:
Բայց ինչքան ջանաց,
Որքան էլ փորձեց,
Քաշեց-քաշքշեց
Եվ թափահարեց,
Մարդու զգեստը
Հագից չհանեց:
Ինչքան շատ փչեց,
Նա այնքան մրսեց,
Ամուր փաթաթվեց,
Տաքուկ հանդերձը
Հապճեպ ամրացրեց:
Քամին երբ տեսավ՝

Ոչինչ չստացվեց,
Իր տեղը զիջեց
Եվ մի կողմ քաշվեց:
Հուր-արեգակը
Շատ ոգևորվեց,
Որ մրցակիցը
Ջենքը ցած դրեց:
Արեգը ժպտաց,
Հողը ջերմացրեց,
Մարդն անչափ շոգեց,
Շորերը հանեց:
Ահա թե ինչպես
Արփին ժպտերես
Դաս տվեց քամուն,
Հաղթեց թշնամուն:
28.07.08.

Եղեգն ու կաղնին

Եղեգն ու կաղնին
Բուռն վիճեցին,
Թե ով է ուժեղ,
Ամուր և զորեղ:
Վեճի թունդ պահին
Քամի բարձրացավ,
Եղեգը դողաց
Ու մի բուռ դարձավ:
Ճկվեց, կռացավ,
Գետին խոնարհվեց,
Ահեղ փոթորկին
Նա դիմակայեց:
Հաստաբուն կաղնին
Կանգնեց շատ հպարտ,
Ինքն իրենից գոհ,
Անհաղթ ու անպարտ:
Խելառ մրրիկը
Սաստիկ կատաղեց,
Ծառը արմատից
Պոկեց, տապալեց:
Ինքնագոհ կաղնին
Գետին գլորվեց,
Խոնարհ եղեգը
Փոթորկից փրկվեց:
Այսպես է կյանքում.
Տերը գոռոզին՝
Ամբարտավանին,
Ծնկի է բերում,

Իսկ խոնարհներին
Դժվար պահերին
Նեցուկ է դառնում,
Պահում-պահպանում:

28.07.08.

Ապաշխարող գայլը

Գայլը մի օր հիվանդացավ,
Ջերմությունը շատ բարձրացավ,
Ջանը դողաց, գույնը գցեց,
Ճարահատյալ երկինք նայեց:
Ջերմ աղոթեց հայր-Բարձրյալին
Եվ ուխտ արեց, որ մի տարի
Կապաշխարի, պաս կպահի,
Իր բերանը միս չի տանի,
Միայն թե Տերն իրեն փրկի,
Ապաքինի, ոտքի հանի:
Կարճ ժամանակ որ անց կացավ,
Տկար գայլը առողջացավ,
Ոտքի ելավ, մտավ անտառ,
Մեկ էլ հանկարծ դեմը ելավ
Ախորժելի մի թխլիկ գառ:
Փութկոտ լիզեց շրթունքները
Եվ մոռացավ խոստումները.
«Արի ուտեմ անտեր գառին,
Պաս կպահեմ հաջորդ տարի»:
Վրա հասավ, զոհին բռնեց,
Պատառոտեց, փորը լցրեց:
Գիշատիչը սուրբ չի դառնա.
Ինչքան էլ որ անմեղանա,
Աղոթք անի, ապաշխարի,
Իր բնույթը նա չի փոխի.
Գայլ ծնվել է, գայլ կմեռնի:
05.08.08.

Այրի կինն ու հավը

Այրի կինը հավիկ ուներ,
Որն ամեն օր մի ձու կածեր,
Այդ հավկիթը վաճառելով՝
Օրվա հացը կվաստակեր:
Ընչաքաղցը չգոհացավ,
Է՛լ ավելին նա ցանկացավ
Եվ մտածեց, թե ոնց անի,
Որ հավը շատ ձվեր հանի:
Առավոտից մինչ իրիկուն
Կերակրում էր, հա կերակրում,
Ինչքան լավ էր նրան նայում,
Հավիկն այնքան քիչ էր ածում:
Կչկչանը շուտով տռզեց,
Փորը ուռավ, գետնին քսվեց,
Առատ կերից ճարպակալեց
Ու այլևս ոչինչ չածեց:
Առակս ի՞նչ կուսուցանե,
Այն, որ մարդը աչքածակ է,
Իսկ հաճախ էլ շատին ձգտում,
Ունեցածն է նա կորցնում:

29.07.08.

Հնարամիտ մարդը

Տերը մարդուն կավից կերտեց,
Նրան հոգի, շունչ պարգևեց,
Կյանք շնորհեց և հորդորեց,
Որ նա ապրի մարդավայել,
Մարդավարի, լինի պարկեշտ,
Արդարամիտ, ազնիվ, բարի:
Աչքածակը իրեն տրված
Տարիներով չգոհացավ,
Է՛լ ավելին նա ցանկացավ,
Մտածեց՝ ոնց հաջողացնի՝
Կյանքը դույզն-ինչ երկարացնի:
Հենց որ ցրտեց եղանակը,
Մարդը շինեց իր հյուղակը,
Մեջը մտավ, պատսպարվեց,
Ցրտին մի կերպ դիմակայեց:
Պաղ ձմեռը երբ սաստկացավ,
Էշը մրսեց, հիվանդացավ,
Խուլ տնակի դուռը ծեծեց,
Աղերսագին լացուկոծեց.
-Աղաչում եմ, ներս ընդունիր,
Տանդ տեղ տուր, ապաստանիր,
Մինչև գարուն պահիր քեզ մոտ,
Տուր ինձ վարսակ, գարի ու խոտ:
Աղամորդին նրան լսեց,
Փոքր-ինչ խորհեց, հետո ասեց.
-Թե որ կյանքիդ կեսը ինձ տաս,
Ինչ խնդրեցիր, այն կստանաս:
Ավանակի ճարը կտրեց,

Պահանջածը նրան տվեց,
Ներս խցկվեց, պատսպարվեց,
Ցրտին, սովին դիմակայեց:
Քիչ անց խոզը դուռը թակեց,
Աղի-լեղի արցունք թափեց,
Նույն պայմանին համաձայնեց,
Գյուղացու մոտ հանգրվանեց:
Շունն էլ եկավ, շատ կաղկանձեց,
Լաց-կոծ արավ ու թախանձեց,
Սա էլ կյանքի կեսը տվեց,
Ցրտից, քաղցից կաշին փրկեց:
Ասում են, թե սույն օրվանից
Աստվածատուր տարիներին
Մարդն ապրում է մարդավարի,
Իսկ մնացյալ մյուս կեսը,
Որ պոկել էր այդ չտեսը
Ավանակից, խոզից, շնից,
Անց է կացնում շատ տանջալի.
Էշի բաշխած տարիներին
Աշխատում է գիշեր ու զօր,
Սաստիկ տանջվում ու չարչարվում,
Անխոնջ բանում: Խոզի տված
Կյանք-օրերին ապրում է նա
Խոզի նման, խոզավարի:
Շան ընծայած տարիներին
Գոյությունը քարշ է տալիս
Մի շան հալի, դառնում է չար
Եվ բամբասկոտ,
Սրա-նրա միսն է ծամում,
Գզվռտում է, կռիվ անում:

06.08.08.

ՔԱՌՅԱԿՆԵՐ

ՄՈՒՅՆ
ՔԵՐԹՎԱԾՔՆԵՐԸ՝
ԳԵՐՀՈԳՈՒՅ ԲԽԱԾ
ԽՈՀՈՒՆ ԳԱՆՁԵՐԸ,
ԱՄԵՆԱՅՆ ՍԻՐՈՎ ՈՒ
ԱԿՆԱԾԱՆՔՈՎ
ՁՈՆՈՒՄ ԵՄ ՄԵԾՆ
ԱՐԱՐՉԱՊԵՏԻՆ՝
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ
ՆԵՐՀՈՒՆ
ՎԱՐՊԵՏԻՆ:

Սա՛ էլ կանցնի, մի՛ վշտացիր, ցավին մի կերպ դիմացի՛ր,
Հարատև չէ ոչինչ կյանքում, հաստատապես իմացիր.
Դժբախտություն, երջանկություն հաջորդում են մեկմեկու,
Ինչպես մահին՝ հաջորդ կյանքը, մթին՝ լույսը կենսատու...

05.02.12.

Եթե տաճար պիտի մտնես, աղոթք անես, մոմ վառես,
Իսկ հետո էլ ստես, կեղծես, թալանես ու սպանես,
Լա՛վ իմացիր, ոչ թե Աստծուն, այլ հենց քեզ ես դու ծաղրում,
Բարեպաշտի, սրբի դեմքով ապուշի դեր ես խաղում:

05.02.12.

-Թե Աստված կա, որտե՞ղ է Նա, ինչո՞ւ երբեք չեմ տեսնում,
Իմ տրտունջը, աղոթքները ինչո՞ւ երկինք չեն հասնում...
-Է՜յ, կարճամի՛տ, ապրի՛ր այնպես, որ Տերն ինքը տեսնի քեզ,
Այդժամ Նրան ոչ թե աչքով, այլ քո հոգով կտեսնես:

05.02.12.

Ասում են, թե մարդու աչքը հողում է լոկ
լիանում,
Ինչ էլ տրվի, ինչքան դիզի, մեկ է, նա չի
գոհանում...
Մերկ ենք ծնվել ու այդպես էլ պիտի երթանք
աշխարհքից,
Այս ամենը չի մնալու ո՛չ ձեզ, ո՛չ քեզ, ո՛չ էլ՝
ինձ:

06.02.12.

Հոգին մարդու էությունն է՝ անծին, անմահ,
մնայուն,
Հող-մարմինը անցավոր է, մահկանացու,
անկայուն,
Հոգին մենք ենք, մեր բուն եսը, իսկ մարմինը՝
լոկ պատյան,
Առանց եսի այն մեռած է, անշունչ դի է նա
միայն:

06.02.12.

Հողը ինչքան տրորվում է, ավելի է
պնդանում,
Մարդը ինչքան տառապում է, ավելի է
մարդանում,
Ծառ ու ծաղիկ, թիթեռ ու ճանճ չգիտեն,
թե ցավն ինչ է,
Նրանց համար երջանկություն կամ
տխրություն ոչինչ է:

06.02.12.

Տիեզերքի գաղտնիքները՝ խորախորհուրդ,
անմեկին,
Շատ հազվադեպ բացահայտվում, հայտնվում
են այն մեկին,
Ով մշտապես որոնել է, փնտրել իմաստն այս
կյանքի,
Ում որ Տերը միշտ ձաղկել է՝ ենթարկելով
տանջանքի:

06.02.12.

Արդարությունն ու պատիժը երբեք էլ չեն
հապաղում.
Մեր լավ ու վատ արարքների պտուղներն ենք
միշտ քաղում,
Թե հաջողվի մեզ խուսափել պատիժներից
երկրային,
Մենք չենք կարող բնավ խույս տալ
Դատավորից երկնային:

06.02.12.

Թե շարունակ մենախոսես, անշո'ւշտ, իրավ
կլինես,
Եթե անվերջ գովքդ անես, հարկա'վ, լավը
կլինես...
Ա'յ մեծամիտ, ինքնահավա'ն, հերիք չեղա՞վ
քեզ գովես,
Չէ՞ որ ինքդ հստակ գիտես՝ իրականում դու
ով ես:

06.02.12.

Առանց փշի վարդ չի լինում – նա էլ ունի
թերություն,
Առանց դարդի մարդ չի լինում – հո սա՞ էլ չէ
նորություն,
Հոգ չէ, սակայն, երբ ալ վարդը մեր մատներն
է ծակոտում,
Իսկ ի՞նչ անենք, երբ սև դարդը նուրբ հոգին է
խոցոտում:

06.02.12.

«Էշի քացուց չեն նեղանա»,- կա այսպիսի
ասացվածք,
Անչափ դիպուկ, դույզն-ինչ կոպիտ, բայց
ճշմարիտ է ասված:
Եթե կյանքում ինչ-որ մեկը զուր տեղը տա
աքացի,
Ավանակի բնույթն է դա, նրանից մի'
նեղացի:

07.02.12.

Ամեն փորձանք՝ մի-մի հորդոր, մի-մի
խորհուրդ մեզ համար,
Կյանքում շատ կան փորձություններ, ցավեր,
դավեր անհամար,
Բայց դե խևին խրատը՝ ինչ. որքան ծեծվի ու
դաղվի,
Միևնույն է, չի խրատվի, կյանքից դասեր չի
քաղի:

07.02.12.

Պարտություններ ու հաղթանակ,
ձեռքբերումներ ու կորուստ
Որոշված են ի սկզբանե, սահմանված են
ի վերուստ,
Մարդն անցնում է Տիրոջ կողմից նախանշված
իր ուղին,
Ծնվում, ապրում և վաղ թե ուշ հանձնվում է
մայր-հողին:

07.02.12.

Մարդ չի կարող երբեք գործել Երկնավորին
հակառակ,
Լինի նա սուրբ, լինի արդար կամ՝ անբարո,
անառակ,
Բախտը փոխել, հունից շեղել չի հաջողվել ոչ
մեկին,
Լինի ահել, լինի ջահել, լինի դա այր կամ թե՝
կին...

07.02.12.

Լոտոս ծաղկի թերթիկի պես բացվեց աչքը իմ
հոգու
Այն ժամանակ, երբ խոր ցավից սրտիս վերքն
էր ամոքվում,
Լույս-աչքերով տեսա Նրան՝ տիեզերքը
Ստեղծողին,
Պայծառ մտքով ըմբռնեցի գոյիս իմաստը
խորին:

07.02.12.

Ես հինդու եմ, դու՝ քրիստոնյա, մեկ ուրիշը՝
հեթանոս,
Մահմեդական, բուդդայական... Սաստիկ խառն
է ու քաոս.
Չի ճանաչում հոգին երբեք ազգություն կամ
դավանանք,
Մենք ոգեղեն էակներ ենք, ե՞րբ պիտի սա
հասկանանք:

07.02.12.

Հենց փչում է շունչը վերջին և մարմինը
մահանում,
Հոգին ազատ թռչնակի պես թռչում է ու
հեռանում...
Դարեր ի վեր դեգերում է տիեզերքում
անսահման՝
Մահից հետո ձեռք բերելով մեկ այլ մարմին-
կացարան:

08.02.12.

Հնուց եկած մայր-գրքերը՝ Վեդաները
սրբազան,
Ծնունդ առան Աստծո շնչից, որ ազգերին
այլազան
Աստվածային գիտությունը ուսուցանեն ու
կրթեն,
Որ չմնան մութ-խավարում, լույսի ուղին հեշտ
գտնեն:

08.02.12.

Երազում ինձ սպանեցին, ինքս ինձնից
հեռացա,
Անէացա, ելա երկինք, իսկ երբ ահից
արթնացա,
Տերը ասաց. «Մի՛ երկնչիր, քեզ սպանել չեն
կարող.
Դու հոգի ես, ոչ թե՝ մարմին, հուր-կրակ ես, ոչ
թե՝ հող»:

08.02.12.

Ամեն կրոն ծնունդ ունի, ունի սկիզբ և
ավարտ,
Իսկ հավատքը մշտագո է, հարամնա,
անաղարտ,
Պաշտամունքը ձև է միայն, խոր հավատը՝
էություն,
Առանց որի ո՛չ մի կրոն չունի երկար
գոյություն:

08.02.12.

Չունեցածի համար երբեք դու մի՛ տխրիր
ու լացիր,
Ուրախացիր քեզ տրվածով, եղածով էլ՝
գոհացիր:
Որ խորհրդիս ունկն դնես, խելամիտ մարդ
կլինես,
Անհնարին թե չձգտես, փոքր-ինչ անդարդ
կլինես:

08.02.12.

Ասում են, թե նյութ-աշխարհը խավարակուռ
մի բանտ է.
Վաղնջական ժամանակից հոգին այստեղ
պատանդ է,
Հենց պատրանքին գերի դարձավ, երկինք-
տնից հեռացավ,
Կալանվելով նյութի կողմից՝ անեղծ հոգին
մարմնացավ:

08.02.12.

Հավերժի դեմ, հավերժի մոտ մարդու կյանքը՝
լոկ վայրկյան,
Ընդամենը ակնթարթ է, սոսկ հպանցիկ պահ է
այն...
Օգտվելով այս պահ-կյանքից՝ փնտրենք
ճամփան անհունի,
Թե չէ այսպես մենք նման ենք թափառական
անտունի:

08.02.12.

Հերիք չեղա՞վ՝ կրոնները պայքար մղեն իրար
դեմ,
Հերիք չեղա՞վ՝ ժողովուրդներն իրար անդուլ
հոշոտեն...
Բա'վ է արդեն, դաշինք կնքեք ու հաշտություն
բաղձալի,
Մենք բոլորս զավակներն ենք, կայծ-մասնիկը
Բարձրյալի:

09.02.12.

Երջանկություն, պատիվ ու փառք անցողիկ են,
պատրանք են,
Հարստություն, գոհար ու գանձ վաղանցիկ են,
խաբկանք են.
Այսօր ունենք, վաղը՝ չկան, իսկ մենք՝ գերին
պատրանքի,
Մե՛նք վայելում, մե՛նք ողբում ենք՝
ենթարկվելով զրկանքի:

09.02.12.

Մե՛կ Աստված կա, մե՛կ Արարիչ՝
Ճշմարտություն Բացարձակ,
Չեմ երկմտում, հաստատապես ասում եմ ես
համարձակ,
Որ բազում են ուղիները Գերագույնին
հասնելու,
Ո՛չ մի կրոն չունի հիմքեր իրեն բարձր
դասելու:

09.02.12.

Մեր կարճ խելքով, խավար մտքով կրոններ
ենք հնարում,
Այլ հավատքի ու ազգության մարդկանց իրար
դեմ լարում,
Մինչդեռ հոգու գիտությունը, որն առկա է
հավիտյան,
Չի ճանաչում ո՛չ դավանանք, ո՛չ ազգ, ո՛չ սեռ,
ո՛չ սահման:

09.02.12.

Կյանքը խաղ է, վերջը մահ է, մահը ահ է ու
կրկին
Մահն սկիզբ է, մահն էլ խաղ է և նոր կյանք է
վերստին.
Ծնունդ ու մահ, սկիզբ ու վերջ հաջորդում են
անդադար,
Օրենքն է սա տիեզերքի, որ գործում է
դարեդար:

09.02.12.

Առանց Տիրոջ թույլտվության կյանքում ոչինչ
չի լինում,
Ճնճղուկն առանց Հոր գիտության ճյուղից
գետին չի ընկնում,
Ուր մնաց, թե մարդն ինքնակամ վերջ տա
կյանքին, մահանա,
Դեմ գնալով Աստծո կամքին՝ ինքնագլուխ
հեռանա:

09.02.12.

Արարիչը հստակ գիտի, թե ում ինչ է
հարկավոր,
Հանուն շահի կարիք չկա բերան ծռել ամեն
օր,
Նյութի համար աղոթք անել և հաց մուրալ մեր
Հորից,
Լցնել անտակ փոր-որկորը, խնդրել դարձյալ
ու նորից...

10.02.12.

Հզորի դեմ մենք անզոր ենք, չար բախտի դեմ՝
անկարող,
Մեկ է, ինչքան գլուխ կոտրենք, ոչինչ անել
չենք կարող.
Ո՞ր անճարն է ճարը կտրած՝ բախտը շտկել,
փոփոխել,
Այդ ո՞ր մեկն է ազատ կամքով ի՛ր իսկ
կյանքում բան փոխել:

10.02.12.

Տարածություն և ժամանակ մտքով կտրի
ու անցա,
Ճանաչեցի Երկնավորին, ով լինելս
իմացա,
Օտարացա ու հեռացա այլասերված այս
դարից,
Ուր մարդ կոչվածն ու կենդանին չեն
տարբերվում իրարից:

11.02.12.

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ



1

Նա մի փոքրիկ կաթնասուն է,
Ո՛չ մկնիկ է, ո՛չ թռչուն է,
Պոչիկ ունի, հովհար-թևեր,
Մազոտ մարմին, մանրիկ աչքեր:

2

Ձեռագործի հմուտ վարպետ,
Բայց չի հյուսում գորգ ու կարպետ,
Առանց շյուղի ցանց է գործում,
Իր զոհերին այդպես որսում:

3

Աղջիկ է, բայց պոչիկ ունի,
Հարսիկ է, բայց շորիկ չունի,
Դիցուհի է անզուգական,
Հեքիաթային, անիրական:

4

Ամառ-ձմեռ թասակով է,
Թզուկ է, կարճ հասակով է,
Մե՛կ համեղ է, ախորժաբեր,
Մե՛կ էլ՝ թունոտ ու մահաբեր:

5

Փոքրիկ գունդ է՝ պատկերազարդ,
Խայտաբղետ և գունազարդ,
Աջ ու ահյակ պտտելիս
Աշխարհով մեկ ման ես գալիս:

6

Գետնատարած գնդիկը՝
Հաստագլուխ ցմփորիկը,
Մե՛ռթ Մոխրոտի կառքն է դառնում,
Մե՛ռթ՝ մարդկային կերպար առնում:

7

Գլանաձև, վրան կաշի,
Առանց նրա էլ ի՞նչ տաշի...
Երբ ծեծում են, նա չի լացում,
Այլ բոլորին պար է ածում:

8

Կենդանի է նա ընտանի,
Ե՛վ կաթնատու, և՛ պիտանի,
Դեռ շատ վաղուց Հնդկաստանում
Սուրբ էակ է այն համարվում:

9

Մարմին ունի մետաղից,
Ժանիքները՝ սուր ու ցից,
Առաջ ու ետ գնալիս
Փշուրներ է շաղ տալիս:

10

Լողացող է, ձկնիկ չէ,
Ձու ածող է, հավիկ չէ,
Հենց որ գարուն է գալիս,
Ուրախ համերգ է տալիս:

11

Թերթեր ունի, վարդ չէ,
Շապիկ ունի, մարդ չէ,
Ընկերացի՛ր նրա հետ,
Որ չմնաս դու տգետ:

12

Ջրի միջին լողում է,
Գետնի վրա սողում է,
Քաղցի հանդեպ՝ դիմացկուն,
Խորագետ է, իմաստուն:

13

Նախշազարդ է, տարբեր ձևի,
Խավավոր է, առանց թևի,
Այնուհանդերձ հեքիաթներում
Սավառնում է բարձունքներում:

14

Հաղթանդամ է, բոյ-բուսաթով,
Անց է կենում անապատով,
Տեղափոխում ծանր բեռներ,
Մեջքին ունի լեռ կամ լեռներ:

15

Երբ մութ գիշերն է գալիս,
Վերից աչքով են տալիս
Կանթեղները լուսավոր,
Սրածայր ու թևավոր:

16

Արշալույսին ոսկե կառքով
Երկինք ելնում, պտտվում,
Իրիկունը տուն է դառնում,
Իր մոր գրկում քուն մտնում:

17

Թռչնակ չէ, բայց թևավոր է,
Գեղեցկադեմ, լուսավոր է,
Արարած է եթերային,
Պատգամաբեր աստվածային:

18

Ուղղանկյուն է, բացիկ չէ,
Պուտավոր է, զատիկ չէ,
Քարեր ունի, որոնցով
Խաղ ենք անում մերոնցով:

19

Օրոր-շորոր ման է գալիս,
Ջրի միջին լող է տալիս,
Լայնակտուց ու կարճատոտ,
Կարճլիկ վզով, սաստիկ վախկոտ:

20

Սողուն է շատ վտանգավոր,
Ջրաբնակ ու կեղծավոր,
Որսից առաջ սուգ է կապում,
Կեղծ արցունք է աչքից թափում:

21

Երկկենցաղ է,
Գորտի նման,
Հետն էլ անպոչ,
Մեծաբերան:

22

Այն և՛ բույս է,
Ե՛վ մարմնի մաս,
Դե՛ գուշակիր,
Թե կարենաս:

23

Ճյուղեր ունի
Վարսի պես,
Լաց է լինում
Հարսի պես:

24

Մարմին է, բայց
Գլուխ չունի,
Թևեր ունի,
Ոտքեր չունի:

25

Ասեղ ունեմ,
Բայց ծակ չունի,
Փոխարենը
Գլխարկ ունի:

26

Գետաբնակ
Մեծ կաթնասուն,
Գիտե՞ս՝ նրան
Ինչ են ասում:

27

Երեք խոշոր
Աչք ունի,
Ամեն մեկը
Մի գույնի:

28

Մոլորակ է այն
Եվ քիմիական տարր,
Դե ասա՝ ինչն է,
Թե գլխի ընկար:

29

Կլորիկ է գնդի պես,
Ջոլավոր է զեբրի պես,
Երբ լավ հասած է լինում,
Անուշ համ է ունենում:

30

Արմատ ունի, ծառ չէ,
Պսակ ունի, հարս չէ,
Աքցանի պես բռնում է,
Աղացի պես մանրում է:

31

Յոթ քույրեր են երգեցիկ,
Մեղեդային, գեղեցիկ,
Մեկը մեկից տարբերվող,
Ախորժաձայն ու գերող:

32

Բերան չունի, սուլում է,
Ոտքեր չունի, սուրում է,
Քաշքշում է, պար գալիս,
Աղբ ու փոշի շաղ տալիս:

33

Ո՛չ վագր է, ո՛չ էլ՝ ձի,
Բայց ասում են վագրաձի,
Թե որ մի քիչ մտածես,
Հանելուկը կլուծես:

34

Արեգի պես կլոր է,
Մանգաղի պես կեռ-կոր է,
Երբ որ գիշերն է ընկնում,
Թառում է մութ երկնքում:

35

Խոշորակն, կեռաքիթ,
Հայացք ունի անքթիթ,
Գիշերները կռնչում,
Սարսափ է մեզ ներշնչում:

36

Մարդու նման ման է գալիս,
Ձկնիկի պես լող է տալիս,
Թռչուն է այն սև ու ճերմակ,
Թևիկները՝ փոքրիկ լողակ:

37

Շնազգի է, խորամանկ,
Սուր դնչիկով, մորթին՝ թանկ,
Գիշատիչ է, կարճատոտ,
Նախշուն պոչով՝ թավ, բրդոտ:

38

Զրային բույս՝ ծաղիկներով
Եվ ուտելի պտուղներով,
Աստվածային, գեղեցկաթույր,
Սրբազան և անուշաբույր:

39

Զարթուցիչ է, բայց շնչավոր,
Ալ մորուքով, կտուցավոր,
Այգաբացին հենց արթնանում,
Զիլ կանչում է, քնից հանում:

40

Պոչիկ ունի ու չորս թաթիկ,
Սողուն է նա՝ աշխույժ, ճարպիկ,
Բռնվելիս պոչը պոկում,
Ճողոպրում է, կյանքը փրկում:

41

Գոտի է լայն, աղեղնավոր,
Եթերային ու գունավոր,
Ծնվում է նա լուրթ երկնքում,
Մահկանացուն շուտով կնքում:

42

Էակ է չար, մտացածին,
Մութ աշխարհից, խավարածին,
Մեծ երախից հուր է թափում,
Ջրի ճամփան՝ ակը փակում:

Պատասխաններ

1. Չղջիկ
2. Սարդ
3. Ջրահարս
4. Սունկ
5. Գլոբուս
6. Դդում
7. Դհոլ
8. Կով
9. Սղոց
10. Գորտ
11. Գիրք
12. Օձ
13. Գորգ
14. Ուղտ
15. Աստղեր
16. Արև
17. Հրեշտակ
18. Դոմինո
19. Քաղ
20. Կոկորդիլոս
21. Դոդոշ
22. Քազուկ
23. Ուռենի
24. Աստղ
25. Գնդասեղ
26. Գետաձի
27. Լուսազդանշան
28. Ուրան
29. Ձմերուկ
30. Ատամ
31. Ձայնանիշ
32. Քամի
33. Ձերը
34. Լուսին
35. Քու
36. Պինգվին
37. Աղվես
38. Լոտոս
39. Աքաղաղ
40. Մողես
41. Ծիածան
42. Վիշապ

Ծանոթագրություններ

ԱԴՈՆԻՍ–Այս անունը փյունիկերեն նշանակում է «պարոն»: Հույները սույն առասպելը փոխառել են փյունիկցիներից, վերջիններս էլ՝ բաբելացիներից, ովքեր ունեցել են պատմություն սիրո աստվածուհի Իշտարի և գեղեցիկ Թամմուզի՝ մեռնող ու ամեն գարնան հարություն առնող աստծո մասին:

ԱԹԵՆԱՍ-ՊԱԼԼԱՍ–Հունական դիցարանի գլխավոր աստվածություններից մեկն է, Զևսի դուստրը: Եղել է իմաստության ու ռազմի դիցուհին, արհեստների և գիտության հովանավորը: Համարվել է քաղաքների, մասնավորապես՝ Տրոյայի պահապանը, Աթենքի անվանադիրը:

ԱԻԴ–Նույն ինքը՝ Հադեսը:

ԱԿՏԵՈՆ–Թեբեի թագավոր Կադմոսի դստեր որդին:

ԱՄՊԱՀԱԼԱԾ–Զևսի մակդիրներից է:

ԱՄՊՐՈՊԱՅԻՆ–Զևսի մակդիրներից է:

ԱՊՈԼԼՈՆ–Զևսի և Լետոյի որդին, արվեստների հովանավորն ու մուսաների առաջնորդը: Համարվել է լույսի և ապագան կանխատեսող աստված:

ԱՏԼԱՍ–Տիտան, Պրոմեթևսի եղբայրը: Աստվածների դեմ տիտանների հետ կռվելու համար Զևսը

նրան դատապարտեց «երկրի ծայրում» հավերժ կանգնած պահել երկնակամարը:

ԱՐԱՔՆԵ–Իդմոնոսի դուստրը:

ԱՐԾԱԹԱՂԵՂ–Ապոլլոնի մակդիրներից է:

ԱՐՏԵՄԻՍ–Ապոլլոնի երկվորյակ քույրը, որսորդության դիցուհին, կենդանիների պաշտպանն ու ծննդաբերության հովանավորը:

ԱՖՐՈԴԻՏԵ–Սիրո և գեղեցկության դիցուհին:

ԳԱՐ ԳԱՓԻԱ–Հովիտ Բեոտիայում՝ համանուն աղբյուրով:

ԳԵԱ–Երկրի մարմնավորումը, աստվածների նախամայրը:

ԴԱՓՆԵ– Գետերի աստված Պեննսի դուստրը:

ԴԵԼՈՍ–Կղզի Էգեյան ծովում, Ապոլլոնի և Արտեմիսի ծննդավայրը, որը հայտնի էր Ապոլլոնին նվիրված սրբավայրով:

ԴԻՈՆԻՍՈՍ–Զևսի ու Սեմելեի որդին, խաղողագործության և գինու աստվածը:

ԴԻՈՍ–Զևսի մյուս անունը:

ԴԻՔԵՐ–Դիցաբանական աստվածներ:

ԵՐԿՐԱՍԱՍԱՆ–Պոսեյդոնի մակդիրն է:

ԶԵՎՍ–Քրոնոսի որդին, հունական դիցարանի գերագույն աստվածը, աստվածների հայրն ու տիրակալը:

ԷՈՍ–Արշալույսի աստվածություն:

ԷՊԱՓՈՍ–Զևսի և Իոյի որդին:

ԷՐՈՍ–Սիրո աստվածը:

ԷՔՈ–Արձագանքի հավերժահարսը, այստեղից էլ՝ ռուսերեն эхо (արձագանք) բառը:

ԼԻԴԻԱ–Պետություն Փոքր Ասիայում, որը ջախջախվել է պարսիկների կողմից մ. թ. ա. VI դարում:

ԿԱՌԱՓՆԱԾԻՆ–Աթենաս-Պալլասի մակդիրն է: Այսպես էին անվանում, քանզի դիցուհին ծնվել էր աստվածահոր՝ Զևսի կառափից:

ԿԵՆՏԱՎՐՈՍ–Ձիու և մարդու մարմնով առասպելական արարած, ինչպես նաև՝ երկնակամարի հարավային կիսագնդի մեծ համաստեղություններից մեկը:

ԿԻԹԵՐԱ–Կղզի, որի մոտ ծնվել է Աֆրոդիտեն:

ԿԻԹԵՐՈՆ–Լեռնաշղթա Բեոտիայի և Ատտիկայի սահմանին:

ԿԻԹԵՐՈՒՀԻ–Աֆրոդիտեի մակդիրներից է:

ԿԻՊՐՈՍԱԾԻՆ–Աֆրոդիտեի մակդիրներից է:

ԿԻՊՐՈՒՀԻ–Աֆրոդիտեի մակդիրներից մեկը: Ըստ ավանդության, նա ծնվել է ծովի ճերմակ փրփուրներից և ափ ելել Կիպրոս կղզում:

ԿԼԻՄԵՆԵ–Ծովային աստվածուհի Թետիսի դուստրը:

ՀԱԴԵՍ–Մեռյալների ստորերկրյա թագավորության դժնատեսիլ աստվածը, Զևսի եղբայրը:

ՀԵԼԻԱԴՆԵՐ–Հելիոսի զավակները:

ՀԵԼԻԿՈՆ–Լեռ Բեոտիայի հարավ-արևմուտքում:

ՀԵԼԻՈՍ–Արևի աստվածը:

ՀԵԼԼԱԴԱ–Նույնն է՝ Հունաստան:

ՀԵՐԱ– Գերագույն աստվածուհին, Զևսի քույրն ու կինը:

ՀԵՐՄԵՍ–Աստվածների բանբերն ու մեռածների հոգիների ուղեկիցը դեպի Հադեսի ստորերկրյա թագավորություն: Եղել է ճանապարհորդների, առևտրի, հնարագիտության, խաբեության, մինչև անգամ՝ գողության հովանավոր աստվածը: Այնուհետև նույնացվել է գիտության ու կախարդության եգիպտական Տոտ աստծո հետ՝ դառնալով նաև կախարդության և աստղագուշակության աստվածը:

ՀԵՓԵՍՏՈՍ–Զևսի և Հերայի որդին, կրակի ու դարբնության աստվածը:

ՄՈՅՐԱՆԵՐ–Այսպես էին անվանում ճակատագրի դիցուհիներին (Կլոթո, Լաքեսիս և Ատրոպոս), ովքեր բնակվում էին Օլիմպոսում՝ տնօրինելով մահկանացուների ու աստվածների ճակատագիրը:

ՄՈՒՍԱՆԵՐ–Զևսի և Մնեմոսինեի դուստրերը, գիտության ու արվեստի հովանավոր ինը դիցուհիները, ովքեր մշտապես ուղեկցում էին Ապոլլոնին:

ՆԱՐՑԻՍ– Գետերի աստված Կեփիսոսի և հավերժահարս Լավրիոնեի որդին:

ՆԵԿՏԱՐ–Աստվածների ըմպելիք, որը պարգևում էր անմահություն և հավիտենական երիտասարդություն:

ՆԻՄՖԱՆԵՐ–Բնության տարբեր երևույթները մարմնավորող աստվածուհիներ:

ՇԱՆԹԱՌԱՔ–Զևսի մակդիրներից է:

ՇԱՆԹԱՐՁԱԿ–Զևսի մակդիրներից է:

ՊԱԿՏՈԼՈՍ– Գետ Լիդիայում:

ՊԱՆ–Անտառների աստվածը, հովիվների, հոտերի ու նախիրների պահապանը, բնության հովանավորը: Նա մարդկանց ահ ու սարսափ էր ներշնչում: Այստեղից էլ ծնունդ են առել панический страх, паника, паникер արտահայտությունն ու բառերը:

ՊԱՌՆԱՍ–Լեռ Հունաստանի Փոկիս մարզում:

ՊԱՏՄՈՍ–Հունական կղզի Էգեյան ծովի հարավարևելքում:

ՊԵԱՆ–Այդպես էին կոչվում Ապոլլոնին (երբեմն էլ՝ այլ աստվածներին) ձոնվող հանդիսավոր երգերը:

ՊԵՆԵՎՍ– Գետերի աստված:

ՊԻԹՅԱՆ–Ապոլլոնն սպանել էր Պիթո տեղանքում իշխող Պիթոն օձին և ստացել այս մականունը:

ՊՈՍԵՅԴՈՆ–Ծովերի տիրակալ աստվածը, Զևսի եղբայրը:

ՍԵԼԵՆԵ–Լուսնի աստվածություն:

ՍՏԻՔՍ–Համաձայն հունական դիցարանի, մեռյալ-

ների ստորերկրյա թագավորությունը շրջապատող գետ, որի ջրերով տրված երդումը սրբազան ու անդրժելի էր համարվում մարդկանց և աստվածների համար:

ՎԱՀԱՆԱԿԻՐ–Զևսի մակդիրներից է:

ՏՄՈԼՈՍ–Լեռ Լիդիայում:

ՓՐՓՐԱԾԻՆ–Աֆրոդիտեի մակդիրներից է:

ՔԱՈՍ–Հին հույների պատկերացմամբ, ամենից առաջ գոյություն է ունեցել միայն մշտնջենական մթին Քաոսը, որից էլ ծնվել են աշխարհն ու աստվածները:

ՔԱՐԻՄՆԵՐ– Գեղեցկության, հրապուրանքի և նրբագեղության աստվածուհիները:

ՔՐՈՆՈՍԱԾԻՆ–Զևսի մականունն է: Այդպես էին անվանում, քանի որ նա Քրոնոսի որդին էր:

ՕԼԻՄՊՈՍ–Հելլենական աստվածների նստավայրն ու սրբազան լեռը:

ՕՎԿԻԱՆՈՍ–Ուրանոսի և Գեայի որդին:

ՕՐԵԱԴՆԵՐ–Լեռնային հավերժահարսեր:

ՖԱԵՏՈՆ–Արևի աստծո՝ Հելիոսի որդին:

ՖԱՎՆ–Այծամարդ, սատիր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի ստեղծագործական ուղին 4

Հելլենական լեգենդներ 8

Դափնե 9
Նարցիս 16
Միրինգա 23
Ակտեոն 29
Արաքնե 35
Ադոնիս 41
Ֆաետոն 47

Առակներ և լեգենդներ 57

Բժիշկ գորտը 58
Պարծենկոտ բզեզը 60
Երջանկությունը 63
Ձևսն ու կրիան 65
Մոծակն ու եզը 67
Խարդախ փիսոն 69
Կատուն՝ քահանա 70
Ուղտն ու եզը 71
Աղվեսն ու կռունկը 72
Ագռավն ու աղվեսը 74
Աղվեսն ու այծը 76
Մեծամիտ կանթեղը 79
Առյուծը, աղվեսն ու էշը 81
Մեծամիտ էշը 85
Ագահ մրջյունը 87

Կրիան ու արծիվը *88*
Անխելք լուսինը *89*
Ծերունին և մահը *90*
Իշուկն ու գայլը *92*
Անբախտ ավանակը *94*
Կուրամուկը *96*
Էշն ու առյուծը *97*
Աստղագուշակը *100*
Աքաղաղն ու գողը *101*
Անճոռնի ճայակը *103*
Մոծակն ու առյուծը *105*
Մկնիկները *107*
Որսորդները *109*
Ժլատ մեղուները *111*
Պոչատ աղվեսը *113*
Պարծենկոտ ջորին *115*
Արևն ու քամին *117*
Եղեգն ու կաղնին *119*
Ապաշխարող գայլը *121*
Այրի կինն ու հավը *122*
Հնարամիտ մարդը *123*

Քառյակներ *125*

«Սա՛ էլ կանցնի, մի՛ վշտացիր…» *127*
«Եթե տաճար պիտի մտնես…» *127*
«Թե Աստված կա, որտե՞ղ է Նա…» *127*
«Ասում են, թե մարդու աչքը…» *128*
«Հոգին մարդու էությունն է…» *128*
«Հողը ինչքան տրորվում է…» *128*
«Տիեզերքի գաղտնիքները…» *129*

«Արդարությունն ու պատիժը…»..... 129
«Թե շարունակ մենախոսես…» 129
«Առանց փշի վարդ չի լինում…» 130
«Էշի քացուց չեն նեղանա…»..... 130
«Ամեն փորձանք՝ մի-մի հորդոր…» 130
«Պարտություններ ու հաղթանակ…» 131
«Մարդ չի կարող երբեք գործել…» 131
«Լոտոս ծաղկի թերթիկի պես…» 131
«Ես հինդու եմ, դու՝ քրիստոնյա…» 132
«Հենց փչում է շունչը վերջին…» 132
«Հնուց եկած մայր-գրքերը…»..... 132
«Երազում ինձ սպանեցին…»..... 133
«Ամեն կրոն ծնունդ ունի…» 133
«Չունեցածի համար երբեք…»..... 133
«Ասում են, թե նյութ-աշխարհը…» 134
«Հավերժի դեմ, հավերժի մոտ…».....134
«Հերիք չեղա՞վ՝ կրոնները…».....134
«Երջանկություն, պատիվ ու փառք…» 135
«Մե՛կ Աստված կա, մե՛կ Արարիչ…» 135
«Մեր կարճ խելքով, խավար մտքով…».....135
«Կյանքը խաղ է, վերջը մահ է…» 136
«Առանց Տիրոջ թույլտվության…».....136
«Արարիչը հստակ գիտի…».....136
«Հզորի դեմ մենք անզոր ենք…».....137
«Տարածություն և ժամանակ…» 137

Հանելուկներ..... *138*

Պատասխաններ..... *150*

Ծանոթագրություններ *151*

ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԷԼ. ՓՈՍՏ՝ narinemkrtumyan@rambler.ru

ԵՐԿԵՐ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ
ԽՄԲԱԳԻՐ ԵՎ ՍՐԲԱԳՐԻՉ՝
ԿԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ
ՄՈՒՏՔԱԳՐՈՂ ԵՎ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ՝
ՆԱՐԻՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ